

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԻՆԵ ՌՈՄԻԿԻ ԳԱԳԻՆՅԱՆ

Ինֆինիտիվի տիպաբանությունը

Ժ. 02.02 - «Շնդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ -2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Պաշտոնական  
ընդդիմախոսներ՝

բան. գիտ. դոկտոր, պրոֆ. Լ. Խաչատրյան

բան .գիտ. դոկտոր, պրոֆ. Վ. Մադոյան

բան.գիտ. դոկտոր, պրոֆ. Մ. Ֆրիտց

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական  
լեզվահասարակագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2016 թ. հունիսի 20-ին՝ ժամը 15:00, ՀՀ ԳԱԱ  
Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի՝ Լեզվաբանության 019  
մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի  
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. ապրիլի 8-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան

Թեմայի արդիականությունը: Լեզ ”  
հիմնական առանցքն է, որի ուսում  
մտածողների և լեզվաբանների ուշադ

ջերականական համակարգը նրա  
ությունը դարեր ի վեր գրավել է  
նր: Լեզուն ժամանակի ընթացքում

ենթարկվում է որոշակի փոփոխությունների, որոնցից գերծ չի մնում նաև նրա քերականական համակարգը, այդ թվում՝ բայի անվանական ձևերը: Ուշագրավ է, որ լինելով անվան և բայի միջակայքում՝ այս ձևերը ժամանակի ընթացքում անցում են կատարում անվանական համակարգից բայական համակարգ կամ հակառակը: Լեզուների դերբայական համակարգերի զարգացման գուագադրական ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն տվյալ լեզվի քերականական կառուցվածքի լիակատար նկարագրության, այլև ընդհանուր լեզվաբանական և տիպաբանական տեսակետից, քանի որ այդ համակարգերում առկա դերբայական ձևերի, այդ թվում նաև ինֆինիտիվի ձևակազմական ու շարահյուսական առանձնահատկություններն ունեն նաև տիպաբանական-դասակարգողական արժեք. օգնում են համակարգային և կառուցվածքային տեսանկյունից բացահայտելու ինֆինիտիվի հասկացական և քերականական կարգերը, նրա քերականացման ուղիները, բայի դիմավոր և անդեմ ձևերի հետ կազմած նրա հակադրությունների չեզոքացման հիմքերը, նրա պատմական առնչությունները դերբայական այլ ձևերի հետ:

Գիտական նորույթը: Ներկա աշխատությունը, ըստ էության, փորձ է նորովի ներկայացնելու ինֆինիտիվի, հատկապես հայերենի անորոշ դերբայի տիպաբանական բնութագիրը: Այստեղ քննության են առնվել նաև անորոշ դերբայի, ինչպես նաև անցյալ դերբայի զարգացման միտումները ընդհանուր տիպաբանության համատեքստում:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է եղել համաժամանակյա և տարաժամանակյա տիպաբանության տեսանկյունից տալ ինֆինիտիվի տիպաբանական բնութագիրը՝

Այդ նպատակի հասար գրվել և հնարավորինս լուծվել են հետևյալ խնդիրները.

- Վերլուծել լեզվաբանության մեջ առավել հայտնի տեսակետները ինֆինիտիվի ծագման և բնույթի մասին:
- Վեր հանել ինֆինիտիվի տիպաբանական զարգացման առանձնահատկությունները:
- Քննության առնել ինֆինիտիվի հասկացական և քերականական կարգերը կառուցվածքային և համակարգային տեսանկյունից:
- Ուսումնասիրել ինֆինիտիվի հակադրությունների զարգացումը բայական համակարգում:
- Ներկայացնել անորոշ դերբայի տիպաբանական բնութագիրը հայերենում:
- Քննության առնել հայերենի անորոշ դերբայի ցուցիչի ծագումը և գործառույթները ընդհանուր տիպաբանության համատեքստում:
- Ներկայացնել հին հայերենի սեռական հոլով+անցյալ դերբայ կառույցի ծագման մեկնաբանությունը հայ լեզվաբանության մեջ:
- Վերլուծել հայերենի անցյալ և անորոշ դերբայների քերականացման ուղիները ընդհանուր տիպաբանության համատեքստում:

- Վեր հանել հին հունարենի ազդեցությունները անորոշ դերբայով գրաբարյան կառույցների վրա:
- Քննության առնել անորոշ դերբայի բնականությունը ժամանակակից հայերենում

Ուսումնասիրության մեթոդներն են զուգադրական և տարածամանակյա տիպաբանության, ինչպես նաև բնական լեզվաբանության քանակական մեթոդները:

Ուսումնասիրության փաստական նյութը: Աշխատանքի փաստական հիմքն են կազմել հին, միջին և նոր հայերենի ձեռագրերն ու գրական երկերը:

Աշխատանքի տեսական և գործնական արժեքը: Լինելով ինֆինիտիվի տիպաբանական քննության առաջին փորձը հայ լեզվաբանության մեջ՝ ներկա աշխատանքը կարող է նպաստել ինֆինիտիվի ծագման, զարգացման միտումների մասին ընդհանուր պատկերացում կազմելուն: Այն կարող է կարևոր աղբյուր լինել հետազայում ևս տարածամանակյա տիպաբանությամբ, քերականությամբ զբաղվողների, մասնագիտական ֆակուլտետների ուսանողության համար: Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել նաև հայերենի պատմական քերականությամբ զբաղվողներին:

Թեմայի գործնական նշանակությունն է նպաստել բուհերում «Զուգադրական տիպաբանություն», «Հայոց լեզվի պատմություն», «Հայերենի համեմատական քերականություն» և «Հայերենի տիպաբանական զարգացումը» առարկաների դասավանդմանը:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, հինգ գլուխներից (իրենց ենթազուխներով), եզրակացություններից և գրականության ցանկից: Նախաբանում ներկայացված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ինչպես նաև հարցի ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության ծավալը՝ 243 էջ:

Աշխատանքի **առաջին գլուխը** նվիրված է ինֆինիտիվի ծագման և բնույթի հարցերին անտիկ շրջանից մինչև մեր օրերը:

***Ինֆինիտիվի ծագման և բնույթի հարցը անտիկ քերականություններում:*** Ինֆինիտիվի ծագման և բնույթի հարցերը պատկանում են այն սակավաթիվ հարցերի շարքին, որոնք ներառվել են անտիկ քերականական մտքի հետաքրքրությունների շրջանակում: Ընդ որում, եթե նրա ծագման խնդրով զբաղվել են հնդկ քերականները, ապա բնույթի հարցը հետաքրքրել է և՛ հույներին, և՛ հռոմեացիներին, և՛ հնդկներին: Այստեղ իր դերն է ունեցել ինչպես ինֆինիտիվի կոնկրետ դրսևորումը տվյալ լեզվում, այնպես էլ քերականների՝ խոսքի մասերի դասակարգման հարցում ձևին կամ բովանդակությանն առաջնություն տալը: Եթե հույն և հռոմեացի քերականները ինֆինիտիվին բայական բնույթ են վերագրում՝ ելնելով նրա՝ տվյալ լեզուներում սեռային և ժամանակային հարաբերություններ արտահայտելուց և խոսքի մասերի դասակարգման հարցում առաջնորդվելով իմաստային հատկանիշով, ապա հին հնդկերենի ավանդությամբ այն համարվում է անուն, եթե ոչ ձևական հատկանիշը հիմք ըն-

դունելու, ապա բառի ձևաբանական վերլուծության, ինչպես նաև հին հնդկերենի ինֆինիտիվի՝ վերոհիշյալ բայական կարգերից գուրկ լինելու պատճառով:

***Ինֆինիտիվի ծագման և բնույթի հարցը եվրոպական եվ ռուս քերականություններում:*** Ինֆինիտիվի ծագման և բնույթի հարցը տարբեր կերպ է լուծվել նաև լեզվաբանության պատմության հետագա շրջանում: Եթե անտիկ շրջանում մտածողներին ավելի շատ հետաքրքրում էր ինֆինիտիվի բնույթի հարցը, ապա արդեն ռուս և եվրոպական՝ հատկապես պատմահամեմատական քերականություններում, առաջին պլան է մղվում ինֆինիտիվի ծագման հարցը: Այստեղ առաջին հերթին հիշատակելի է գերմանացի լեզվաբան Ֆր. Բոպպը, որն անվանական ծագում է վերագրում ինֆինիտիվին: Ուսումնասիրելով սանսկրիտի, հին հունարենի, գոթերենի, պարսկերենի ինֆինիտիվները՝ նա Պանինիի և Սակոտիսի նման ինֆինիտիվը համարում է անուն՝ քարացած որևէ հոլովում:

Ինչ վերաբերում է նրա բնույթի հարցին, ապա այն դարձյալ լուծվում է տարբեր կերպ: Տրամաբանական քերականություններում այն ավանդույթի համաձայն դիտարկվում է որպես բայի եղանակներից մեկը, ձևական քերականություններում մի կողմից դիտվում է որպես բայական համակարգի մաս, մյուս կողմից՝ առանձին խոսքի մաս<sup>1</sup>: Ավելի ուշ, ինչպես, օրինակ, Օ. Եսպերսենի կամ Լ. Տենիերի քերականություններում, այն դարձյալ համարվում է առանձին խոսքի մաս, իսկ իմացաբանական քերականություններում մյուս դերբայների հետ մեկտեղ ներառվում է բայական համակարգում:

***Անորոշ դերբայի ծագման և բնույթի հարցը հայ լեզվաբանության մեջ:*** Ուշագրավ է, որ հայերենի անորոշի ծագման հարցը նույնպես քննարկվել է համեմատաբանության շրջանակում: Այստեղ ևս նրան վերագրել են անվանական ծագում՝ հանգեցնելով այն և՛ հայցական, և՛ տրական հոլովներին: Եթե Հ. Ֆոգտը այն բխեցնում է հայցական հոլովից՝ \*-lom, ապա Ռ. Շտենպելը՝ տրականից \*-lōi: Ինֆինիտիվի բնույթի խնդիրը տարբեր լեզվաբանական դպրոցներ տարբեր կերպ են լուծել՝ հիմնականում կախված այն բանից, թե ինչ դրսևորումներ է ունեցել տվյալ լեզվում ինֆինիտիվը, կամ ինչ սկզբունքներով են դասակարգվել խոսքի մասերը: Տարբեր դպրոցների ազդեցությունը կրել է նաև հայ լեզվաբանական միտքը: Անորոշ դերբայի բնույթի հարցը հայ լեզվաբանության մեջ հիմնականում լուծվել է տարբեր քերականական հոսանքների ազդեցության ներքո, նախապես՝ դասական, այնուհետև՝ տրամաբանական և ձևական, իսկ ավելի ուշ՝ իմացաբանական քերականությունների օրինակով: Ընդհանուր առմամբ հայ լեզվաբանության մեջ անորոշ դերբայը համարվել է և՛ բայի եղանակ, և՛ բոլոր դերբայների հետ միասին առանձին խոսքի մաս, և՛ նախադասության տեսակ, որը սերտորեն կապված է այն եղանակ համարելու տեսակետի հետ, և՛ բայանուն, և՛ բայ: Եթե առաջին երեքը հիմնականում կրել են հունահռոմեական քերականությունների, ապա վերջին երկուսը՝ եվրոպական և ռուս քերականություն-

<sup>1</sup> Հայտնի է, որ Մ. Աբեդյանը, հարելով ձևական քերականությանը, անորոշը համարում է անուն ի տարբերություն ռուս և անգլիական ձևական քերականությունների: Կարծում ենք, սա պայմանավորված է տվյալ լեզուների ինֆինիտիվի բնույթով. ինչպես գիտենք, թե՛ ռուսերենում և թե՛ անգլերենում ինֆինիտիվը անգամ չի կարող գոյականացվել:

ների ազդեցությունը՝ խոսքի մասերի դասակարգման հարցում գերապատվություն տալով ձևին, իմաստին կամ գործառույթին: Եվ եթե վերջին երեքի սահմանները հստակ երևում են, ապա նույնը չի կարելի ասել առաջին երկուսի մասին, քանի որ թեև անորոշ դերբայի՝ եղանակ լինելու տեսակետը նախորդել է այն մյուս դերբայների հետ առանձին խոսքի մաս համարելուն, դժվար է հստակ սահմանել, թե երբ է անորոշ դերբայը դադարել եղանակ կամ մյուս դերբայների հետ առանձին խոսքի մաս համարվելուց, քանի որ ժամանակ առ ժամանակ տարբեր քերականներ վերադարձել են այդ դրույթներից որևէ մեկին:

Իրականում անորոշի բնույթի հարցը լուծելու համար անհրաժեշտ է տալ նրա տիպաբանական բնութագիրը, այլ կերպ՝ բնութագրել նրան քերականական և հասկացական կարգերի տեսանկյունից, գտնել նրա տեղը և դերը լեզվական համակարգում: Ուստի անհրաժեշտ ենք համարել այդ ամենին անդրադառնալ հաջորդ գլխում:

Աշխատության **երկրորդ գլխում** առաջադրված խնդիրները վերաբերում են ինֆինիտիվի տիպաբանական բնութագրին և զարգացմանը:

**Ինֆինիտիվի հասկացական և քերականական կարգերի կառուցվածքային և հասկարգային վերլուծություն:** Հասկացական կարգերը ընդհանուր բնույթի իմաստային տարրեր են, որոնք հատուկ են ոչ թե առանձին բառերի և բառաձևերի, այլ բառախմբերի, որոնք բնական լեզվում արտահայտվում են տարբեր միջոցներով:

Հասկացական կարգերի մեծամասնությունը բնորոշվում է միջուկից և առմիջուկային մասերից բաղկացած որոշակի գործառախմաստաբանական դաշտով, որի քերականացված միջուկի դերում հանդես է գալիս համապատասխան քերականական կարգը, ինչպես օրինակ՝ ժամանակայնությանը համապատասխանում է քերականական ժամանակը, եղանակայնությանը՝ եղանակը և այլն:

Ինֆինիտիվի հասկացական և քերականական կարգերի համակարգային և կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ ինֆինիտիվի հասկացական և քերականական կարգերը այս երկու տեսանկյունից տարբեր ընդգրկում ունեն:

**Ինֆինիտիվի հակադրությունները բայական համակարգում:** Հակադրություններն ի հայտ են գալիս հարացույցում այն դեպքում, երբ հակադրության եզր կազմող միավորները ունեն որոշակի ընդհանուր և տարբերակիչ հատկանիշներ: Օժտված լինելով վերոհիշյալ հատկանիշներով՝ ինֆինիտիվը և բայի այլ անդամ ձևերը նույնպես կազմում են ենթահամակարգ: Հայտնի է, որ հին լեզուներում ինֆինիտիվի գործածության շրջանակն ավելի լայն է, որի հետևանքով մեծ է նաև նրա կազմած հակադրությունների քանակը: Արտահայտելով նպատակի և ընդհանուր բայական իմաստ՝ այն այլ անդամ ձևերից հակադրվում է հիմնականում գերունդին և սուպինին, հազվադեպ նաև գերունդիվին: Լեզուների զարգացման նախորդ փուլերում դժվար է գտնել որևէ ինֆինիտիվ, որը լիովին անփոփոխ մնացած լինի: Այն բնականաբար պետք է անցնի զարգացման որոշակի ուղի և քերականացվի: Իր բնույթով լինելով բայանվան որևէ հոլովաձև՝ ինֆինիտիվը ժամանակի ընթացքում ամրանում է այդ ձևում: Ընդ որում՝ հենց ինֆինիտիվի տարբեր հոլովաձևերն էլ երբեմն անվանվում են գերունդ: Եթե

պայմանականորեն ինֆինիտիվ անվանենք նրա չթեքված ձևը, ապա կարող ենք եզրակացնել, որ ինֆինիտիվը անդեմ ձևերի համակարգում հիմնականում հակադրվում է սուպինին ու գերունդին, մասամբ նաև գերունդիվին, որոնք ժամանակի ընթացում որպես կանոն վերածվում են կամ անփոփոխ ինֆինիտիվի, կամ գերունդային այլ քարացած ձևերի:

Այլ կերպ՝ ինֆինիտիվի և այլ անդեմ ձևերի հակադրություններում թերևս ոչ նշույթավորվածը ինֆինիտիվի ուղիղ ձևն է կամ արդեն գործողության ընդհանուր բովանդակություն ունեցող քարացած այլ հոլովածները, քանի որ նշված հակադրությունները չեզոքանում են հենց վերոհիշյալ ձևերի օգտին, որի հետևանքով ստեղծվում են ինֆինիտիվի և ինֆինիտիվից սերված նոր ձևերի հակադրություններ:

Լինելով բայական համակարգի անբաժանելի մասը՝ ինֆինիտիվը դերբայական մյուս ձևերի հետ հակադրվում է դիմավոր բայի կերպաժամանակային ձևերին: Նրա և դիմավոր բայի հակադրությունը հիմնված է որպես տարբերակիչ հատկանիշ հանդես եկող դիմավորության վրա:

Հայտնի է, որ անորոշի հիմնական առանձնահատկությունը դեմքի քերականական կարգի և նրա հետ պայմանավորված թվի ու ժամանակի քերականական կարգերի հանդեպ չեզոքությունն է, որն ասելիքը դարձնում է ավելի ընդհանրական ու վերացական:

Հայտնի են բավականին շատ սահմանափակումներ՝ կապված թե՛ դիմավոր բայի, թե՛ անորոշի բաշխման հետ, որն իր հերթին պայմանավորված է այն ստորգական կառույցի արժույթով և իմաստային դաշտի պատկանելությամբ, որի համար որպես պարտադիր կամ ոչ պարտադիր ակտանտ է անորոշը: Մյուս կողմից՝ անորոշի և դիմավոր բայի հակադրությունը շատ հաճախ կախված է քերականական այնպիսի երևույթից, ինչպիսին քողարկված ենթական է:

Ընդհանուր առմամբ, անորոշ դերբայի գործածության շրջանակն ավելի սահմանափակ է, քան դիմավոր բայինը: Այն կարող է փոխարինել դիմավոր բային, երբ կա՛մ նրա քողարկված ենթական և հիմնական բայի ենթական է նույնը, կա՛մ նրա քողարկված ենթական և հիմնական բայի խնդիրը, օրինակ՝ եղանակավորիչ բայերի հետ կամ ուղիղ խնդրի հետ միասին բացառական կամ տրական հոլովով խնդրի պահանջող եռարժույթ բայերի դեպքում, ինչպես՝ *պահանջել նրանից ներկա լինել, աղաչել նրան գթալ* և այլն: Ի տարբերություն բայի այլ անդեմ ձևերի, որտեղ քողարկված ենթական հեշտությամբ կարող է դառնալ ոչ քողարկված, անորոշ դերբայով կառույցների դեպքում ուղղական-ենթական բացառվում է՝ բացառությամբ դիմավոր ինֆինիտիվների: Այսպիսով՝ անորոշի ենթական կարող է միայն թեք հոլովածներով հանդես գալ, քանի որ այդ կառույցները նախապես առաջացել են վերավերլուծության (Reanalyse) միջոցով, այլ կերպ՝ նրա քողարկված ենթակայի թեք հոլովածները ծագումնաբանորեն պայմանավորված է գլխավոր նախադասության բայով: Բհարկե, կան նաև այնպիսի դեպքեր, երբ անորոշը, անկախ քողարկված ենթակայի գոյությունից, գերիշխում է: Այդպիսիք են, օրինակ, որպես անվանական ստորոգյալ հանդես եկող ածականների և վերացական գոյականների հետ գործածվող կառույցները, որտեղ բո-

վանդակությունը ներկայացվում է վերացականորեն: Դրանք հակադրվում են ոչ միայն դիմավոր ձևերին, այլև գոյականին կամ բայանվանը, օրինակ՝

*Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,  
Զգալ, որ դու կասս և լինել հեռու: (Տերյան)*

Եթե բովանդակությունը վերացական է ներկայացվում, ապա անորոշ դերբայ-դիմավոր բայ հակադրության մեջ ոչ նշույթավորված է առաջինը:

Անորոշ դերբայի և դիմավոր բայի հակադրությունները ի հայտ են գալիս, երբ անորոշը կամ նրանով կազմված կառույցը կատարում է ենթակայի, խնդրի, բաղադրյալ բայի բաղադրիչի, պարագայի պաշտոն՝ մրցակցելով դիմավոր բայի հետ կամ պարզ նախադասության, կամ երկրորդական նախադասության կազմում:

Եթե համաժամանակյա կտրվածքում դիմավոր բայը կարող է փոխարինվել անորոշով, երբ վերջինիս քողարկված ենթական և հիմնական բայի ենթական նույնն են, և անորոշ դերբայ-դիմավոր բայ հակադրությունը չեզոքանում է դիմավոր բայի օգտին, երբ ասույթի և անորոշի ենթակաները տարբեր են, ապա տարածամանակյա տեսակետից նույնպես գործում է հենց այս կանոնը, որի համաձայն դիմավոր բայի են վերածվում նաև անորոշ դերբայով բացարձակ կառույցները, ինչպիսիք են՝ անորոշը հայցականի, տրականի և ուղղականի հետ կառույցները: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ տարածամանակյա հայեցակետից որպես կանոն անորոշն է վերածվում դիմավոր ձևի և ոչ թե հակառակը, քանի որ պատմական տեսանկյունից այն ծագում է բայարմատի հոլովված ձևերից:

Տարածամանակյա հայեցակետից անորոշի և դիմավոր բայի հակադրությունների չեզոքացման հետևանքով ընդհանուր առմամբ ի հայտ են գալիս բալկանյան ինֆինիտիվը, դիմավոր ինֆինիտիվը, ինչպես նաև տեղի է ունենում անորոշը հայցականի, ուղղականի կամ տրականի հետ կառույցների վերածում դիմավոր ձևերի:

Ինչպես և անվանումն է հուշում, բալկանյան ինֆինիտիվը վերաբերում է բալկանյան թերակղզու լեզուներին, այսինքն՝ բալկանյան լեզվամիությանը, որտեղ ինչ-ինչ պատճառներով ինֆինիտիվը ժամանակի ընթացքում վերածվել է պայմանական եղանակով արտահայտված դիմավոր բայի:

Քալկանյան ինֆինիտիվը անվանումը ձևաբանական տեսանկյունից փոքր-ինչ ճիշտ չէ, քանի որ այն, այնուամենայնիվ, հանդես է գալիս որպես դիմավոր բայ: Մյուս կողմից՝ անվանումը մասամբ արդարացնում է իրեն, քանի որ դիմավորությունն այստեղ սահմանափակվում է միայն ներկա ժամանակով, թեև շրջասական եղանակով հնարավոր է արտահայտել նաև վաղաժամություն և կրավորական սեռ: Բալկանյան ժամանակակից լեզուներում ինֆինիտիվից գուրկ են հունարենը, տոսկյան ալբաներենը, մակեդոներենը, մինչդեռ գեզյան ալբաներենը, ռումիներենը, ինչպես նաև սերբերենի որոշ բարբառներ սահմանափակ չափով են այն կիրառում:

Բալկանյան ինֆինիտիվի բանաձևն է՝  $V_{[+FIN]} + SR + V_{[+FIN, +KNJ]}$ , որտեղ SR-ը ստորադասական մասնիկն է: Այս ստորադասական ցուցիչը ինքնին չի կարող ընկալվել



որպես շաղկապ, քանի որ այն միշտ դրվում է բայից առաջ: Այդ պատճառով էլ այն դիտարկվում է որպես պայմանականի խոնարհման ցուցիչ:

Դիմավոր ինֆինիտիվը, ծագելով ոչ քողարկված ենթակա+ինֆինիտիվ կառույցից, լիովին փոխարինում է անդեմ ինֆինիտիվին, սակայն, ի հավելումն դրա, ձեռք է բերում նաև անվանական հատկանիշներ՝ գրեթե վերածվելով գոյականացված երկրորդական նախադասության:

Թեև բալկանյան և դիմավոր ինֆինիտիվները ունեն որոշակի ընդհանրություններ, սակայն կան նաև տարբերություններ: Եթե բալկանյան ինֆինիտիվը ձգտում է նույն իմաստը արտահայտել բայական միջոցներով, ապա դիմավոր ինֆինիտիվը՝ և՛ բայական, և՛ անվանական:

Դիմավոր ինֆինիտիվն այսպիսով իմաստային առումով որոշակիորեն տարբերվում է սովորական ինֆինիտիվից՝ փոխադարձաբար փոխարինելի լինելով նրա հետ: Բալկանյան ինֆինիտիվը այլևս չի կարող փոխարինվել սովորական ինֆինիտիվով, եթե հաշվի չառնենք երկրորդ ինֆինիտիվի ծագումը, որն արդեն հաջորդում է բալկանյան ինֆինիտիվին՝ զարգանալով հիմնականում ալբաներենում և դակոտումիներենում:

Դիմավոր ինֆինիտիվի առանձնահատկությունն այն է, որ գուգակցում է անվանական և բայական հատկանիշները: Օրինակ՝ պորտուգալերենում այն ունի հետևյալ տեսքը՝

**O louvares-me tu me causa novidade.** «Այն, որ դու ինձ գովում ես (կամ քո գովելը), ինձ զարմացնում է»:

Այստեղ ինֆինիտիվը գոյականի նման օժտված է հոդով և հանդես է գալիս որպես նախադասության ենթակա: Դիմավոր բայի նման էլ այն ունի դիմավոր վերջավորություն, ինչպես նաև **tu** ենթական և ուղիղ խնդիր՝ արտահայտված **me** դերանվամբ:

Ինչ վերաբերում է անորոշը հայցականի, տրականի և ուղղականի հետ կառույցներին, ապա ժամանակակից լեզուներում նրանք աստիճանաբար վերածվում են դիմավոր ձևերի, թեև կան լեզուներ, որոնք այս կամ այն կերպ պահպանել են այս կառույցի գործածության որոշ դեպքեր: Որպես կանոն՝ պահպանվում են այն դեպքերը, որտեղ անորոշը դեռևս ընկալվում է իր նախնական բառային իմաստով՝ հատկապես ներգոյականի իմաստով, ինչպես, օրինակ՝ զգացական բայերի հետ, օր.՝ **լսել, տեսնել**: Մյուս դեպքերում, ասենք ասացական բայերի հետ, անորոշը հայցականի հետ կառույցը գրեթե չի գործածվում, քանի որ այն արհեստականորեն համաբանությամբ է տարածվել այդ բայերի վրա և չի բխում անորոշի բուն իմաստից: Հայտնի է, որ լեզուն աստիճանաբար ազատվում է արհեստական տարրերից, իսկ այս կառույցների վերածումը դիմավոր ձևերի պայմանավորված է անորոշի քերականական իմաստի զարգացմամբ, որտեղ հետին պլան է մղվում նրա բառային իմաստը, այսինքն՝ այլևս չունենալով ներգոյականի իմաստ և ձեռք բերելով գործողության ընդհանուր անվանման իմաստ՝ այն իր տեղը զիջում է դիմավոր բային: Կան նաև լեզուներ, որոնք այդ իմաստը արտահայտելու համար նոր ձևեր են ստեղծել, ինչպես, օրինակ, ժամանակակից հայերենի անկատար II դերբայը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, այս երեք կառույցների զարգացումն ունի համանման միտումներ: Պատկանելով անորոշի զարգացման տարբեր շրջաններին և անցնելով զարգացման տարբեր ուղիներ՝ նրանք ունեն նաև մեկ շատ կարևոր ընդհանուր նախադրյալ, այն է՝ ասույթի և անորոշի ենթակայաների տարբերությունը: Ինչ վերաբերում է անորոշի զարգացման արդյունքին, ապա այստեղ նույնպես կա որոշակի տարբերություն: Եթե անորոշը հայցականի, տրականի և ուղղականի հետ կառույցները, ինչպես նաև բալկանյան ինֆինիտիվը փոխարինվում են դիմավոր ձևերով, որոնք իրենց մեջ ունեն միայն բայական հատկանիշներ, ապա դիմավոր ինֆինիտիվը կամ կիսաինֆինիտիվը վերածվում է մի ձևի, որն ունի և՛ բայական, և՛ անվանական հատկանիշներ:

***Ինֆինիտիվի տիպաբանական զարգացումը:*** Թեև ինֆինիտիվը որոշ քերականություններում համարվում է բայի ելակետային, բառարանային ձևը, սակայն այն այդպիսին լինել չի կարող, քանի որ ծագումնաբանորեն բայի դիմավոր ձևերը միշտ էլ նախորդել են ինֆինիտիվին:

Անգամ որոշ լեզուներում, ինչպես, օրինակ, արաբերենում, վրացերենում, ինֆինիտիվն իսպառ բացակայում է: Այս լեզուներում նրան փոխարինում է գործողության անունը, այլ կերպ՝ մասդարը:

Ինֆինիտիվը թեև ձևի տեսակետից մոտ է բայանվանը և ունակ է ստանալու հոլովական վերջավորություններ, սակայն, ի տարբերություն նրա, չի կարող ունենալ լիակատար հոլովական հարացույց, որպես կանոն պահպանում է բայի խնդրառությունը և օժտված է քերականական կարգերով: Այն լեզուներում, որտեղ հոլովական համակարգը բացակայում է կամ խիստ կրճատված է, ինֆինիտիվի և բայանվան սահմանազատումը շատ դժվար է (օրինակ՝ անգլերենի *-ing* վերջավորությամբ ձևերի բարդ կարգավիճակը):

Որպես կանոն՝ ինֆինիտիվը հակադրության ներսում հանդես է գալիս որպես ոչ նշույթավորված անդամ այն դեպքում, երբ առկա է նույնաենթակայություն, այլ կերպ՝ դիմավոր բայի ենթական և ինֆինիտիվի քողարկված ենթական նույնն են, ինչպես եղանակավորիչ բայերի դեպքում, կամ երբ ինֆինիտիվի քողարկված ենթական համընկնում է դիմավոր բայի խնդրի հետ, օրինակ՝ պատճառական բայերի դեպքում: Սա կարելի է մեկնաբանել լեզվի տնտեսման տեսակետից, քանի որ միևնույն իմաստը արտահայտվում է ավելի սուղ միջոցներով: Ինֆինիտիվի տիպաբանական զարգացումը, կարծում ենք, տեղի է ունեցել հետևյալ փուլերով.

Առաջին փուլ. Ինֆինիտիվը որպես ինքնուրույն բառույթ գոյություն չունի, այլ հանդես է գալիս որպես բառաձև՝ դրված այս կամ այն հոլովով: Այստեղ ինֆինիտիվը գործածվում է այնպիսի ստորոգական կառույցների հետ, որոնք ենթադրում են հաջորդող որևէ թեք հոլովով դրված գոյական: Իմաստային տեսանկյունից դրանք արտահայտում են որոշակի կոնկրետ իմաստ (պատճառական, մոտեցման, նպատակի) և որպես կանոն պահպանում են խնդրառությունը:

Երկրորդ փուլ. Ինֆինիտիվը սկսում է գործածվել որպես ինքնուրույն շարահյուսական միավոր, տեղի է ունենում հոլովական իմաստի մթագնում: Այն գործածվում է

այնպիսի ստորագական կառույցների հետ վերացական բովանդակությունն արտահայտելու համար, ինչպիսիք են, օրինակ, եղանակավորիչ բայերը: Կարծում ենք, որ այս փուլին պետք է վերագրել նաև հրամայական ինֆինիտիվը և նրանից ծագած պատմական ինֆինիտիվը, քանի որ նրանք ընդհանուր առմամբ նշում են գործողությունը՝ հանդես գալով դիմավոր բայի իմաստով:

Երրորդ փուլ. Ինֆինիտիվը ներթափանցում է բայական համակարգ՝ ստանալով նաև այլ քերականական կարգեր, ինչպիսիք են ժամանակի և սեռի քերականական կարգերը, որոնցով օժտված են հին հունարենի և լատիներենի ինֆինիտիվները:

Չորրորդ փուլ. Ինֆինիտիվը դադարում է որպես այդպիսին լինելուց: Նրա փոխարեն հանդես է գալիս կամ դիմավոր բայը, կամ այն խոնարհվում է դիմավոր բայի նման:

Հինգերորդ փուլ. Ինֆինիտիվը գոյականացվում է և լիովին մուտք գործելով անվանական համակարգ՝ ձեռք է բերում առկայացման, երբեմն նաև սեռի քերականական կարգեր:

Ի դեպ, չորրորդ և հինգերորդ փուլերը ոչ թե հաջորդում են միմյանց, այլ ինֆինիտիվի զարգացման տարբեր ուղիներ են: Երբեմն նրանք, իհարկե, միաժամանակ են ի հայտ գալիս, ինչպես, օրինակ, պորտուգալերենի դիմավոր ինֆինիտիվը:

Հայտնի է, որ ինֆինիտիվը ոչ բոլոր լեզուներում է գոյականացվում: Մյուս կողմից՝ ոչ բոլոր լեզուներում են բոլոր ինֆինիտիվները գոյականանում: Եթե հայերենում, գերմաներենում, իսպաներենում և պորտուգալերենում բոլոր ինֆինիտիվները կարող են գոյականացվել, ապա շատ լեզուներ, այդ թվում նաև ժամանակակից ֆրանսերենը, կորցրել են այդ հատկությունը:

Ատենախոսության **երրորդ գլուխը** նվիրված է հայերենի անորոշ և անցյալ դերբայների նախնական գործառույթներին ու այլ լեզուներից կրած նրանց հնարավոր ազդեցություններին:

**Հայերենի անորոշ և անցյալ դերբայների ցուցիչի ծագումը և գործառույթները ընդհանուր տիպաբանության համատեքստում:** Հայերենի անորոշ դերբայը ծագումնաբանորեն առնչվում է անցյալ դերբայի հետ, քանի որ երկուսն էլ կազմված են -լ վերջածանցով, որն ունի հնդեվրոպական, ինչպես նաև նոստրատիկ ծագում՝ հայ. -լ «անորոշ դերբայի ածանց» < հ.-ե. \*l «աձականակերտ ածանց» < նոստր. \* -lu «աձականակերտ ածանց»: Ածանցի նախնական վերջնաձայնավորով ձևը նոստրատիկ լեզուներից պահպանվել է ուրալյան լեզուներում: Մյուս խմբերում վերջին ձայնավորը աղվել է, ինչպես ալթայյան լեզուներում կամ տեղի է ունեցել սրա հետ կապված նախորդող ձայնավորային տարրով ածանցի ծավալում, ինչպես քարթվելերենում<sup>2</sup>:

Հնդեվրոպական \*-l- վերջածանցը հնդեվրոպական ու նոստրատիկ մյուս լեզուներում հանդես է գալիս ինչպես աձականական, այնպես էլ գոյականական ու բայական կազմություններում: Դեռևս Վ. Իլլիչ-Սվիտիչը նոստրատիկ լեզուներում այդ ձևերը քննելիս, գալիս է այն եզրակացության, որ այս ածանցը նախապես հանդես է եկել աձականների և բայաձականների կազմության համար: Ընդ որում՝ նրա այս գործա-

<sup>2</sup> Иллич-Свитыч В.М., Опыт сравнения ностратических языков, 1-3, М., 1976, 2 с. 21.

ռույթը պահպանվել է ամենուրեք: Ինչ վերաբերում է գոյականակերտ գործառույթին, ապա այն մի կողմից դառնում է փոքրացուցիչ մասնիկ, մյուս կողմից՝ ածանցավոր գոյականների վերջածանց:

Քննությունը ցույց է տալիս, որ \*-I ով ձևերը թե՛ հնդեվրոպական լեզուների շքր-ջանում, թե՛ նրանից դուրս գերիշխող են ածականակերտ գործառույթում, այնուհետև բայածականի, գործող անձի և պերֆեկտի կազմության մեջ: Բավականին հազվադեպ են հանդես գալիս անորոշ դերբայում և մասդարում: Նորստրատիկ լեզուներում վերոհիշյալ գործառույթներին ավելանում են գործողության բազմակիության ցուցիչի գործառույթները:

Իսկ գոյականական կազմություններից \*-I ածանցը առավել կենսունակ է որպես փոքրացուցիչ մասնիկ, այնուհետև՝ վերացական գոյականների, գործիքների և այլ անվանումների կազմություններում: Ուշագրավ է, որ գործածության ծավալի տեսանկյունից ամենալայնը հայերենին է: Նրան հաջորդում են սլավոնական, գերմանական լեզուները, հունարենը, լատիներենը, անատոլիական և բալթյան լեզուները, նոստրատիկ լեզուներից՝ ուրալյան, քարթվելական, սեմաքամյան, դրավիդյան և ալթայան լեզուները:

***Հին հայերենի սեռական հոլովով անցյալ դերբայի կառույցի ծագման խնդիրը:***

Հայտնի է, որ հին հայերենի անցյալ դերբայը հետագայում հանդես է եկել որպես վերլուծական ժամանակաձևերի կազմման միջոց: Ինչպես բոլոր վերլուծական ձևերի բաղադրիչները, այն նույնպես անցել է զարգացման որոշակի ուղի, որը կապված է առաջին հերթին հենց այդ դերբայի բովանդակության հետ: Նշենք, որ վերլուծական ձևերի զարգացումը լեզվում պայմանավորված է կա՛մ նոր քերականական իմաստի ի հայտ գալով, կա՛մ հինը նորով փոխարինելու անհրաժեշտությամբ, քանի որ լեզուն գտնվում է անընդհատ փոփոխման գործընթացում: Ժամանակի ընթացքում նախկին ձևը սպառում է իրեն, և անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու նորը: Ընդ որում, քերականական այս կամ այն իմաստը սովորաբար լեզուներում ունենում է միևնույն զարգացումը: Արդի հայերենի վաղակատար ներկա և անցյալ ժամանակները, որոնք կազմվում են վաղակատար դերբայից, այսինքն՝ անցյալ դերբայի զարգացման վիճակից, ունեն ավարտվածության (պերֆեկտային) իմաստ: Պետք է ենթադրել, որ այս ժամանակաձևը (խոսքն այստեղ վերաբերում է վաղակատար ներկային) ունեցել է կերպից ժամանակի անցման իմաստային նույն զարգացումը, ինչ հնդեվրոպականի առիստը: Ուշագրավ է, որ հին հայերենի անցյալ դերբայը կազմված է հենց առիստի հիմքից: Հին հայերենի անցյալ դերբայի զարգացման ուղին ակներև է այնպիսի կառույցում, ինչպիսին անցյալ դերբայ + սեռական կամ ուղղական հոլովով ենթակա կառույցն է: Ընդ որում, սեռական հոլովով ենթական գերիշխում է հիմնականում անցողական բայերի հետ, իսկ ուղղականը՝ անանցողական:

Օր.՝ ***Նորս գործեալ է զգործ: Նա եկեալ է:***

Ի դեպ, համանման հակադրությունն առկա է նաև էրգատիվ լեզուներում: Միակ տարբերությունն այն է, որ եթե հայերենում անցողական բայի խնդիրը դրված է հայ-ցական հոլովով, ապա էրգատիվ լեզուներում՝ բացարձակ հոլովով:

Ընդ որում, եթե անանցողական բայերի հետ անցյալ դերբայը գործածվում է հանգույցով, ապա անցողական բայերի դեպքում՝ հաճախ առանց հանգույցի:

Յին հայերենի այս կառույցի ծագման և բնույթի շուրջ տարբեր կարծիքներ են եղել, որոնք որոշակիորեն լույս են սփռում սեռական հոլովով դրված ենթակայով անցյալ դերբայի այս կառույցի ծագման վրա և զերծ չեն ռացիոնալ հատիկից: Եթե վերոհիշյալ ի մի բերել այն դրույթները, որոնք մեզ համոզիչ են թվում, ապա կարող ենք հիշատակել հետևյալները.

- Անցյալ դերբայի հիմքը սեռային առումով չեզոք է (Է. Բենվենիստ, Կ. Շմիդտ, Վ. Շմալստիգ, Յ. Վայտենբերգ և Է. Թումանյան):
- Անցյալ դերբայը նախապես հանդես է եկել որոշիչ գործառույթով (Ռ. Շտեմպել):
- Սեռական հոլովով այս կառույցը պոսեսիվ (ստացական) է (Մ. Սախոկիա, Է. Բենվենիստ):
- Ունի խոր արմատներ (Մ. Սախոկիա):
- Այս կառույցը անցումային է (Կ. Շմիդտ):
- Ցիկլային զարգացման արդյունք է (Մ. Սախոկիա):
- *Ունենալ*-ով շրջատության և հնդեվրոպականի նկարագրական պերֆեկտի հիմնական կառույցն է (Է. Բենվենիստ, Մ. Սախոկիա):

Սակայն կան հարցեր, որոնք պատշաճ ուշադրության չեն արժանացել հիշյալ տեսություններում կամ էլ ենթակա են ճշգրտման: Այսպես, լիովին պարզ չէ, թե

- որն է հանգույցի բացակայության պատճառը,
- որն է հայցականով խնդրի բնույթը,
- այդ կառույցը նախահնդեվրոպական շրջանից եկող վերապրուկ է, թե հետագայում ի հայտ եկած երևույթ,
- ինչու է անցյալ դերբայով այս կառույցը հիմնականում գործածվում երրորդ դեմքի համար:

Հանգույցի բացակայությունը հատուկ է հնդեվրոպական անվանական նախադասություններին: Հանգույցի նախնական բացակայությունը հուշում է, որ բայաձևական հանդես է գալիս ստորոգման գործառույթով: Այսինքն՝ ենթակայի միջոցով արտահայտվում են դեմքի և թվի քերականական կարգերը, իսկ ստորոգյալի միջոցով՝ ժամանակային հարաբերությունը: Վերջինս բխում է հենց անցյալ դերբայի հիմքի, այսինքն՝ առիստի իմաստից: Ընդ որում, հնագույն վկայություններում անցյալ դերբայը առանց հանգույցի է հանդես գալիս ոչ միայն անցողական, այլև անանցողական բայերի հետ: Կառույցի այդպիսի անհանգույց դրսևորումները բնորոշ են հատկապես հայ ժողովրդական հին բանահյուսությանը, ինչպես նաև Կորյունի ոճին: Պատահական չէ, որ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկը հին հայերենի գրական առաջին հուշարձաններից է: Օրինակ՝

*Ի մանկութեան տիսն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի դռուն Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքրունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւանայ ուրումն (անանցողական):*

*Իսկ Հաբէլին գայն լուեալ փութանակի հասանէր առ Դանիէն...<sup>3</sup> (անցողական):*

Ավելի ուշ շրջանի գրական հուշարձաններում արդեն նկատվում է անցողականի և անանցողականի վերոհիշյալ հակադրությունը, այսինքն՝ անանցողական բայերի հետ հանգույցը գործածվում է, իսկ անցողականների հետ՝ հիմնականում ոչ: Այստեղից հետևում է, որ հանգույցը նախապես հանդես է եկել անանցողական բայերի հետ, այնուհետև՝ անցողականի: Սրա մասին է վկայում նաև մի կողմից *եւ* հանգույցի, մյուս կողմից՝ անցյալ դերբայի բովանդակությունը: Այսպես, ըստ Բենվենիստի, *եւ* բայը վիճակի բայ է, որի իմաստներն են «գոյություն ունենալ, իրականությանը պատկանել»: Ընդ որում, *եւ* բայի արտահայտած վիճակի իմաստը վերաբերում է գոյություն ունեցողին, նրան, ով ինքնին ինչ-որ բան է ներկայացնում, ի տարբերություն *ունենալ* բայի արտահայտած վիճակի իմաստի, որը վերաբերում է ինչ-որ բան ունեցողին: Այսինքն՝ եթե *եւ* բայը նույնականության ներքին հարաբերությունն է արտահայտում, ապա *ունենալ* բայի արտահայտած իմաստը պատկանելությունն է:

Ինչ վերաբերում է անցյալ դերբայի բովանդակությանը, ապա պետք է հիշել, որ այն սերում է աորիստի հիմքից: Իսկ աորիստի հիմքի նշանակությունը գործողությունն է որպես փաստ կամ գործողության ավարտվածությունը: Այստեղից էլ բխում է անցյալ դերբայի սեռային առումով չեզոքությունը:

Նշենք, որ *-եալ* մասնիկն ընդհանուր է բոլոր սեռերի համար: Ընդ որում, ներգործական սեռի բայերը առանց ձևական փոփոխության անցյալ դերբայում կարող են արտահայտել ներգործական և կրավորական սեռի նշանակություն, այսպես՝ *գրեալ = գրել, գրվել, գրած, գրված*: Իսկ չեզոք սեռի բայերը միայն չեզոք սեռի իմաստ են արտահայտում, օրինակ՝ *հասեալ = հասել, հասած, անցեալ = անցել, անցած*:

Այս է պատճառը, որ սեռային հակադրությունը իրենց վրա են վերցնում ենթակայի հոլովները: Այսպես, ուղղականով ենթական գործածվում է անանցողականի և կրավորական սեռի համար: Օր.՝

*Արդ՝ մտեալ թագաւորն՝ բռնն հարկանէր զնմանէն (անանցողական) (Ագաթանգեղոս):*

*Եվ թե այս ամենայն պահեալ էր ի գանձի իմում (կրավորական) (Եզնիկ Կողբացի):*

Ներգործական իմաստի արտահայտման համար ուղղականով ենթական վերածվում է սեռականով ենթակայի: Հիշենք, որ գրաբարին հատուկ է անանցողական բայի իմաստը ներգործականի վերածել ենթական սեռական հոլովով դնելու միջոցով՝

*Է իմ եղբայր մի, որը նույնիմաստ է Ես մի եղբայր ունեն*՝ նախադասությանը:

Իսկ եթե նախադասությունը անենթակա է, ապա այստեղ իր դերն է կատարում *զ* ցուցիչը: Ինչպես նշում է Բենվենիստը, *բայածական + եւ* կառույցի վիճակի իմաստն

<sup>3</sup> Կորին, Վարք Մաշտոցի, Եր., 1994, էջ 87, 88:

այնքան ուժեղ է, որ ենթակայի բացակայության դեպքում *q* ցուցիչի առկայությունն է որոշում, թե տվյալ նախադասությունը ներգործական, թե կրավորական սեռի է:

Այսինքն՝ հին հայերենի անցյալ դերբայը, ինքնին ունենալով վիճակի իմաստ, երկրորդաբար այդ իմաստը ստանում է *էւ* հանգույցի ավելացմամբ: Իսկ վիճակի իմաստն ընկած է առաջին հերթին անանցողական բայերի հիմքում, քանի որ, ինչպես Սավչենկոն է նկատում, անանցողական բայի արտահայտած նախնական իմաստը վիճակի իմաստն է: Այդ է վկայում դեռևս Ա. Դեսնիցկայայի կողմից նկատված օրինաչափությունը հին հունարենում, որի համաձայն ներկայի հիմքը, եթե այն հանդես չի գալիս խնդրի հետ, արտահայտում է նշված բայի վիճակի իմաստը, ընդ որում առօրիստի և պերֆեկտի հիմքերի համար այդ «վիճակի» իմաստը գերիշխող է: Այս նախնական անանցողականությունը տարբերվում էր հետագա անցողականից նրանով, որ ներունակ էր անցողականի վերածվելու, որն էլ իր հերթին կապված է հայցական հոլովի զարգացման հետ:

Հայերենում, ինչպես տեսնում ենք, այդ անանցողականությունը, այսինքն՝ անցյալ դերբայի արտահայտած վիճակի իմաստը, անցողականի է վերածվել ենթական սեռական հոլովով դնելու միջոցով:

Իսկ *էւ* հանգույցի առկայությունը ներգործական իմաստի արտահայտման համար պետք է որ տեղին չլինի, եթե հաշվի առնենք այդ հանգույցի բովանդակությունը, այսինքն՝ նույնականության և ոչ թե պատկանելության իմաստը: Ինչպես արդեն նշվեց, պատկանելության իմաստը, որից և բխում է այս կառույցի ներգործական իմաստը, արդեն արտահայտվում է ենթական սեռական հոլովով դնելու դեպքում: Մյուս կողմից՝ հանգույցի բացակայությունը անցողական բայերի մոտ, կարծում ենք, վկայում է այն մասին, որ հայցական հոլովով դրված գոյականը նախապես որպես ուղիղ խնդիր հանդես չի եկել:

Սա էլ կրկնում է հնդեվրոպական հայցականի զարգացումը, քանի որ, ինչպես հավաստում է Դեսնիցկայան, հայցականը նախորդել է անցողականության կարգին և ծագումնաբանորեն կապված է անորոշ հոլովի հետ, այսինքն՝ հոլովական ձևավորում չունեցող և իրադրական բնույթ ունեցող լայն և ոչ հստակ գործառնություններով օժտված ձևի հետ: Քանի որ անցողականության կարգն էլ կապված է էրգատիվ կառույցի առաջացման հետ, ապա ազատ հայցականը պետք է վերագրել նախաէրգատիվ շրջանին, այսինքն՝ ակտիվին:

Վերադառնալով հայերենին՝ ավելացնենք, որ ազատ հայցականը ավելի ուշ աստիճանաբար վերածվել է ուղիղ խնդրի հայցականի, որի արդյունքում *q* ցուցիչը քերականացվել է որպես հայցականի ցուցիչ: Այս է վկայում այն փաստը, որ հայերենի որոշյալ հայցականի *q* ցուցիչը նախապես այդ իմաստը չի կրել: Այն մասին, որ *q* նախդիրը որոշակիություն է արտահայտել արդեն հայերենի գրավոր արձանագրման ժամանակ, խոսել է դեռևս Ա. Մեյեն և նրա հնագույն իմաստը համարել «նկատմամբ, հարաբերությամբ, վերաբերությամբ»<sup>4</sup>: Ջահուկյանը, փորձելով այն ներկայացնել իր համընդհանուր լեզվաբանական կաղապարի տերմիններով, եզրակացնում է,

<sup>4</sup> Ա. Մեյեն, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1978, էջ 143:

որ այդտեղ առկա է կախման կարգի դրսևորումներից մեկը՝ ուղիղ խընդիրը հանդես է գալիս որպես կախյալ առարկա, և *q*-ն հանդես է գալիս որպես այդ կախման ընդհանուր արտահայտիչ<sup>5</sup>: Այս նախդիրի լայն գործառնությունների մասին են վկայում տարբեր հոլովների հետ նրա գործածությունները: Ըստ Գ. Մանուկյանի, *q*-ի հայցականով արտահայտած իմաստներից մեկն էլ որոշակիության իմաստն է<sup>6</sup>, որն էլ, կարծում ենք, գործել է նաև այս կառույցի նախնական իմաստային համատեքստում:

Մենք չենք կարող այս կառույցը բխեցնել նախահնդեվրոպական ակտիվ շրջանից, քանի որ.

1. Հայերենի այս կառույցը ունի անցողականի և անանցողականի հակադրությունը, որը սկզբունքորեն հատուկ չէ ակտիվ կառույցներին,

2. Արդեն հին հայերենում կար լավ զարգացած նոմինատիվ համակարգ, այսինքն՝ առկա էր ոչ միայն էրգատիվ և նոմինատիվ կառույցներին բնորոշ անցողականի ու անանցողականի, այլև նոմինատիվ կառույցին հատուկ ուղղականի և հայցականի հակադրությունը, որով էլ պայմանավորված է սեռական, տրական հոլովների գոյությունը, որոնք կառուցվածքային տեսանկյունից անհամատեղելի են ակտիվի և ինակտիվի հակադրության հետ:

Այս կառույցի իմաստային համարժեքները այլ հնդեվրոպական լեզուներում նույնպես ուշ շրջանի գոյացում են, օրինակ՝ լատիներենի տրական հոլովով ենթակայով և *est*-ով կամ *habeo*-ով կազմված կառույցները և գերմաներենի պերֆեկտային ձևերը, որոնք կոչված էին փոխարինելու պերֆեկտային հին ձևերին:

Անցյալ դերբայի այս կառույցը նախահնդեվրոպական շրջանում չէր կարող ունենալ նույն գործառնությունը: Ինչպես գիտենք, նրա ցուցիչը նոստրատիկ ծագում ունի, որը, սակայն, այդ շրջանում եղել է ածականակերտ: Ածականակերտ է նաև հնդեվրոպականի համար վերականգնված \*-I ածանցը: Նշենք նաև, որ ընդհանուր հնդեվրոպական բայի անդամ ձևերից ոչ մեկի համար էլ չեն վերականգնվում -I-ով դերբայական ձևերը, թեև առկա են շատ լեզուներում և որպես կանոն համարվում են տարբեր լեզուներում միաժամանակ զարգացած երևույթ:

Այսպիսով, կարող ենք առաջ քաշել հետևյալ վարկածը.

Հին հայերենի սեռականով անցյալ դերբայը հանգում է առբիստի հիմքին, որն իր մեջ արդեն ունի գործողության ավարտվածության, վիճակի իմաստ և նախապես հանդես է եկել որպես որոշիչ: Անանցողական բայերի դեպքում անցյալ դերբայը որպես որոշիչ լրացնում է ենթակային, օրինակ՝ *Նա մեռեալ է նշանակել է նա մեռած է*:

Այստեղ ենթական ուղղականով է, քանի որ անանցողական բայերը չեզոք են, և անցյալ դերբայի արտահայտած վիճակի իմաստը վերաբերում է ենթակային:

Իսկ *ճաշ գործեալ Արզաւանայ ի պատիւ Արտաշիսի* նախադասությունը նախապես *ունենալ*-ով շրջասության մի տեսակ է եղել և նշանակել է *Արզաւանի պատրաստած ճաշը* կամ *Արզաւանը ճաշ ունի պատրաստած*:

<sup>5</sup> Գ. Բ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 127

<sup>6</sup> Գ. Մ. Մանուկյան, Գրաբարի նախդիրները և նրանց գործածությունը հայ պատմագրական երկերում (V-XI դարեր), Եր., 2002, էջ 90:



Այնուհետև, նախնական հատկացյալը վերածվել է ուղիղ խնդրի անանցողական բայերի համաբանական ազդեցության հետևանքով է հանգույցի ավելացման շնորհիվ, ինչպես հետևյալ օրինակում՝ *Չպայն իսկ իմ աջօր տեսեալ է (Եզնիկ)*: Ավելի ուշ սեռականով ենթական թերևս դարձյալ անանցողական բայերի համաբանական ազդեցության հետևանքով աստիճանաբար վերածվել է ուղղականով ենթակայի, քանի որ այլևս չի արտահայտել նախնական իմաստը:

Այսպիսով, հարելով այն կարծիքին, որ բայածականի նախնական գործառույթը որոշիչ գործառույթն է, որը ածականից տարբերվում է նրանով, որ օժտված է ստորոգմամբ, կարծում ենք, որ ենթական սեռական հոլովով է դրվում ակտիվ իմաստ արտահայտելու համար, և բայածականն ինքնին ակտիվ իմաստ արտահայտել չի կարող: Անհանգույց անվանական նախադասությունը հանգույցի միջոցով վերածվում է հանգուցավոր նախադասության, որտեղ էլ նախապես լայն գործառույթներով օժտված հայցականը վերածվում է ուղիղ խնդրի գործառույթ կատարողի:

Ըստ էության՝ մենք ունենք ակտիվ կառույցից նոմինատիվի անցման ուղու կրկնությունը, որն առհասարակ հնդեվրոպական լեզուներին բնորոշ վերլուծական պերֆեկտային ձևի կազմավորմանը հատուկ գործընթաց է:

***Անորոշ դերբայով կառույցների հնարավոր ազդեցությունները հին հունարենից:*** Հայտնի է, որ հին հայերենը զգալիորեն կրել է հունարենի ազդեցությունը, քանի որ շատ երկեր, այդ թվում նաև Աստվածաշունչը, թարգմանվել են հունարենից: Ժամանակի ընթացքում հայ քերականագիտության մեջ ձևավորվում է հունաբան դպրոցը, որի խոշորագույն ներայացուցիչներից էին Մովսես Խորենացին, Դավիթ Անհաղթը, որին էլ ի դեպ վերագրվում է Դիոնիսիոս Թրակացու թարգմանությունն ու մեկնությունը:

Մեր հետազոտության համար հիմք ենք ընդունել Նոր Կտակարանի Հովհաննես Զոհրապյանի հրատարակությունը:

Ինչպես քանիցս նշվեց, հին լեզուներում ինֆինիտիվի կիրառության շրջանակն ավելի մեծ է, քան ժամանակակից լեզուներում: Բազմազան են նաև գրաբարի անորոշ դերբայով կառույցները: Այստեղ ուշադրության են արժանացել և՛ այն կառույցները, որոնք ընդհանրական բնույթ ունեն, և՛ նրանք, որոնք այս կամ այն չափով կրել են հունարենի ազդեցությունը: Ուշագրավ է, որ երկու լեզուներում էլ ի հայտ են գալիս անորոշ դերբայի գործածության որոշ ընդհանուր օրինաչափություններ, թեև կան նաև որոշակի տարբերություններ: Ըստ այդմ՝ անորոշով կառույցները բաշխել ենք հետևյալ խմբերի՝ Ա. լիակատար համապատասխանություններ, Բ. ինֆինիտիվով կառույցներ, որոնք հունարեն բնագրում կան, իսկ հայերենում՝ ոչ, և Գ. կառույցներ, որոնք հունարեն բնագրում ինֆինիտիվով չեն, իսկ հայերենում թարգմանվել են անորոշով: Եթե լիակատար համապատասխանությունները կարող են վկայել հունարենի հնարավոր ազդեցությունների մասին, ապա մյուս երկու խմբերը, ընդհակառակը, խոսում են բուն հայերեն կառույցների մասին:

Լիակատար համապատասխանությունները դրսևորվում են՝ ա) բացարձակ կառույցներում, ինչպիսիք են հայցականը, ուղղականը և տրականը անորոշի հետ, բ) ա-

նորոշող բաղադրյալ ստորոգյալի կազմում և գ) այն դեպքերում, երբ անորոշը հանդես է գալիս նախադասության անդամների գործառնությունով:

Անորոշ դերբայ պահանջող ստորոգական կառույցների քննությունը՝ ըստ խնդրառու բայերի<sup>7</sup> իմաստային դաշտերի, ցույց տվեց, որ անորոշով լիակատար համապատասխանությունները գերիշխում են Ղուկասի ավետարանում (271 դեպք), այնուհետև Մատթեոսի (181 դեպք), Մարկոսի (120 դեպք) և Հովհաննեսի ավետարաններում (103 դեպք):

Անշուշտ, վերը նշված դեպքերի մեծ մասը ունի ընդհանուր տիպաբանական բնույթ և հատուկ է շատ լեզուների, ինչպես օրինակ, եղանակական, մտածական, նպատակի իմաստ ունեցող կառույցների դեպքում, սակայն կան դեպքեր, որոնք գուտ հունական կառույցների պատճենում են հայերենում:

Այսպես՝ որպես ժամանակի պարագա հանդես եկող *եղել + ինֆինիտիվ* կառույցը, որը գերիշխում է Ղուկասի ավետարանում: Էական բայով կառույցը միայն մեկ անգամ է հանդիպում, այն էլ՝ Հովհաննու ավետարանում:

Հայերեն թարգմանության մեջ տեղ են գտել նաև անորոշ դերբայով կառույցներ, որոնք մասնակիորեն են համապատասխանում հունարեն բնագրին: Այսպես՝ երբեմն հունարենում ինֆինիտիվը հանդես է գալիս հոդով, այսինքն՝ արդեն գոյականացված՝ ի տարբերություն հայերենի: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հին հունարենում հոդով ինֆինիտիվը, այնուամենայնիվ, պահպանում է բայական սեռի և կերպի իմաստները: Այսպես՝ երբ դիմավոր բայը հունարենում անցյալ ժամանակաձևով է, ապա նույն ժամանակաձևով էլ դրվում է ինֆինիտիվը:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ չնայած հին հունարենի և գրաբարի անորոշի իմաստագործառական տարբեր ընդգրկումներին՝ երկու լեզուներում էլ դրանք մեծ չափով համընկնում են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ի հայտ են գալիս միայն տվյալ լեզվին բնորոշ առանձնահատկություններ: Տարբերությունները պայմանավորված են՝ 1. հին հունարենի ինֆինիտիվի սեռաժամանակային հարուստ հարացույցով, 2. երկու լեզուներում գոյականացված ինֆինիտիվի առանձնահատկություններով, 3. միևնույն իմաստը դերբայական այլ ձևերով արտահայտելու ունակությամբ, 4. բայական արժույթի տարբերություններով:

Հարկ է նշել, որ ավետարաններում այս կամ այն կառույցը տարբեր հաճախականությամբ է հանդիպում: Նույնը վերաբերում է նաև հունարենի հնարավոր ազդեցություններին: Որպես այդպիսիք՝ կարող ենք նշել հայցականը անորոշի հետ կառույցները, *ՕՏԵ* «մինչ», «մինչև» շաղկապին հետևող անորոշ դերբայ, *եմ* «հարկավոր է» արժեքով, որը հանդիպում է միայն մեկ անգամ, այն էլ Հովհաննեսի ավետարանում, ինչպես նաև *եղել*-ով և *եղել ի*-ով կառույցները, որոնք գերիշխում են Ղուկասի ավետարանում, այնուհետև Մարկոսի, իսկ Մատթեոսի, Հովհաննեսի ավետարաններում նրանք բացակայում են: Թեև ինչպես վերը նշվեց, հունարենում այն համարվում է երբայերենի ազդեցության արդյունք:

<sup>7</sup> Խնդրառությունն այստեղ հասկանում ենք լայն՝ արժույթայնություն իմաստով:

ΩΣΤΕ «*մինչ*», «*մինչև*» շաղկապին հետևող անորոշ դերբայ կառույցները գերիշխում են Մարկոսի ավետարանում, այնուհետև Մատթեոսի ու Ղուկասի ավետարաններում, Հովհաննեսի ավետարանում դարձյալ բացակայում են:

Աշխատության չորրորդ գլխում անդրադարձել ենք քերականացման փուլերին և չափանիշներին, ինչպես նաև հայերենի անցյալ և անորոշ դերբայների քերականացման ուղիներին ընդհանուր տիպաբանության տեսանկյունից:

**Քերականացման փուլերը և չափանիշները:** Լեզվի պատմական փոփոխությունները ենթարկվում են որոշակի դասակարգման՝ ըստ լեզվական մակարդակների: Ընդ որում, կարելի է առանձնացնել ներմակարդակային և միջմակարդակային փոփոխություններ: Վերջիններիս մեջ ուրույն տեղ ունի քերականացումը, որը բնորոշվում է որպես քերականական կայուն կառույցների աստիճանական առաջացում թույլ խոսությային (դիսկուրսիվ) կառույցներից և միաժամանակ վերացական՝ քերականական միավորների առաջացում՝ կոնկրետ բառային միավորներից: Ըստ գերմանացի լեզվաբան Մ. Հասպելմատի՝ քերականացումը խոսքին զուգահեռ առաջացող երևույթ է, որ արդյունք է հասարակական ներգործության<sup>8</sup>:

Այսպիսով, ենթադրվում է խոսքային իրացումների և քերականության կապը, այսինքն՝ այն, որ խոսքային իրացումներից են աստիճանաբար առաջանում քերականական կառույցները, որի նախապայմանը տվյալ երևույթի հաճախակի գործածությունն է:

Բառային ազատ միավորից անցումը քերականական միավորի տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածում, որը հաճախ տևում է հարյուրավոր տարիներ:

Բ. Հայնեն տարբերակում է քերականացման հետևյալ չորս փուլերը՝

- ապախմաստավորում (նշանակության կամ իմաստային բովանդակության կորուստ),
- տարածում (գործածություն նոր համատեքստերում),
- ապակարգայնացում (ձևաշարահյուսական առանձնահատկությունների կորուստ, անկախ բառի կարգավիճակի կորուստ/ձուլում/),
- քայքայում (երոզիա) (արտահայտության պլանի քայքայում):

Այս չորս փուլերը ներկայացնում են քերականացման միջմակարդակային բնույթը: Առաջին և երկրորդ փուլերը տեղի են ունենում իմաստաբանական և գործաբանական մակարդակներում: Ապախմաստավորման դեպքում լեզվական միավորի իմաստն ավելի վերացարկված է դառնում, այլ կերպ՝ տեղի է ունենում իմաստային ընդհանրացում:

Ինչպես Դ. Նյուբրինգը և մյուսներն են իրավամբ նշում, առաջին երկու փուլերը հաճախ միմյանցից դժվար է սահմանագատել, քանի որ ապախմաստավորումը միայն այն ժամանակ է նկատվում, երբ տարածումն արդեն ի կատար է ածվել: Բառույթը կամ քերականույթը գործածվում է նոր համատեքստում, որտեղ նրա գործա-

---

<sup>8</sup> **Haspelmath M.**, Grammatikalisierung: von der Performanz zur Kompetenz ohne angeborene Grammatik. In: Krämer, Sybille & König, Ekkehard (eds.) *Gibt es eine Sprache hinter dem Sprechen?* (Suhrkamp Taschenbuch Wissenschaft.), Frankfurt am Main: Suhrkamp, 2002, 269:

ծությունը մինչ այդ բացատրում էր: Ապախմաստավորման և տարածման հիմքը փոխաբերությունները և փոխանունություններն են, ինչպես նաև ներառումը (*die Implikatur*)<sup>9</sup>:

Ապախմաստավորումը և տարածումը քերականությունների առաջացման համար վճռորոշ են, քանի որ այդ միավորները, ինչպես սահմանումն է հուշում, որևէ խոսքի մասի պատկանող բառերի հնարավորինս մեծ քանակի հետ պետք է հանդես գան և այդ պատճառով իրենց իմաստով էականորեն ավելի վերացական և ընդհանրական պետք է լինեն, քան նրանց նախնական բառայինները: Դ. Նյուբլինգը ապախմաստավորման և տարածման աստիճանը որոշելու համար բերում է օժանդակ բայի քերականացման օրինակը: Բայը գործածում են կամ ա) իր իսկ հետ կամ բ) իր հակահիշի հետ: *haben* «ունենալ»-ի դեպքում երկու դրևորումներն էլ հնարավոր են՝ a) *Sie hat das Buch gehabt* «Նա ունեցել է գիրքը» և b) *Sie hatte das Buch verloren* «Նա կորցրել է գիրքը»: Այստեղ ակներև է դառնում տարածման և ապախմաստավորման բարձր աստիճանը:

Ապակարգայնացումը տեղի է ունենում ձևաշարահյուսական մակարդակում: Մրան է վերաբերում որևէ քերականույթի կամ բառույթի ձևաշարահյուսական հատկանիշների յուրաքանչյուր փոփոխություն: Նախնական ազատ կապակցությունը ժամանակի ընթացքում շարադասության տեսանկյունից ավելի կայուն և ի վերջո պարտադիր միավոր է դառնում: Դրանով այդ միավորը շեղվում է իր բառային դասի այլ բառային անդամներից, որը հանգեցնում է ապակարգայնացման:

Այս դեպքում ի հայտ է գալիս մեկ այլ երևույթ, այն է՝ շարահյուսական վերավերլուծությունը, որը ենթադրում է ասույթի կառուցվածքային մեկնաբանման անհամաձայնություն խոսողի և լսողի միջև:

Չորս փուլերից վերջինը առաջին հերթին ազդում է հնչյունական մակարդակի վրա, որով էլ դրսևորվում է նշանի քերականացումը հնչյունական մասով: Դրանով նկատի ունեն արտահայտության պլանի թուլացումը, որը բխում է երկու գործոններից: Առաջինը՝ քերականությունները ավելի թույլ են շեշտված: Որքան ավելի թույլ է միավորի շեշտվածությունը, այնքան ավելի ուժեղ է հնչյունական կողմի մաշումը խոսքաշարում: Մյուս կողմից՝ քերականական միավորները ունեն գործածության ավելի մեծ հաճախականություն իրենց նախնական ձևերի հետ համեմատած: Այս տեսանկյունից նշանի նվազող հնչյունական կշիռը արտացոլում է նրա նվազող իմաստային կշիռը:

Մակայն բոլոր փուլերի իրականացումը պարտադիր պայման չէ քերականացման համար: Շատ հաճախ վերջին փուլը՝ քայքայումը (երոզիան), չի իրականանում: Թե քանի փուլ է անհրաժեշտ քերականացման համար, անշուշտ, վիճելի է: Եթե ոմանց համար բավարար են ապախմաստավորումն ու տարածումը, ապա մյուսները դրա նախապայման են համարում նաև հստակ ապակարգայնացումը: Մյուս կողմից՝ կան նաև դեպքեր, երբ հնչյունական սղման (երոզիա) դեպքում բառային ծագումը կա՛մ մթագնում է, կա՛մ ձևը վերածվում է գրոյի, կա՛մ լիովին անհետանում: Այս սղ-

---

<sup>9</sup> Nübling D., Dammel A., Duke J., Szczepaniak R., Historische Sprachwissenschaft des Deutschen, Eine Einführung in die Prinzipien des Sprachwandels, Tübingen, 2006, S. 222-224.

ված քերականությիւն հաճախ փոխարինում է մեկ այլ՝ քերականացման հետևանքով ի հայտ եկած քերականությ։

Քերականացման գործընթացը ընթանում է կոնկրետից վերացականի անցումով, գործարանական տեսանկյունից՝ ուժեղից դեպի թույլը, շարահյուսական տեսանկյունից՝ անկախից դեպի կախյալը, ինչպես նաև կարգային տեսանկյունից՝ միանշանակությունից դեպի ոչ տարբերակվածը։ Այսպիսով քերականացումը լիարժեք իրականանում է, երբ

- առաջանում է քերականացված ձևերի՝ գոյություն ունեցող հարացույցների մեջ ներառվելու միտում,
- առաջանում է աճող կապակցվածության միտում, ոչ պարտադիր գործածությունը դառնում է պարտադիր,
- տեղի է ունեննում ձևերի կրճատում և խտացում,
- հարադրությունը (Juxtaposition) զարգանում է միասնական բառի,
- տեղի է ունենում հերթականության ամրագրում (ազատ հերթականության կորուստ)։

Ըստ էության՝ քերականացումը տվյալ միավորի գործածության շրջանակի նեղացումն է և նրա հարացուցայնության աճը։

Այս կամ այն երևույթի քերականացման համար Ք. Լեհմանը բերում է չափանիշների հետևյալ աղյուսակը՝

*Աղյուսակ 1*

Հատկանիշներ	Հարացույց	Շարակարգ
Կապակցում (cohesion)	Հարացուցայնություն	Կցում
Փոփոխակայնություն (variability)	Հարացուցային փոփոխակայնություն	Շարակարգային փոփոխակայնություն
Կշիռ (weight)	Յուրացում (integrity)	Հարաբերակցումը այլ միավորների հետ (scope)

Ընդ որում, քերականացման դեպքում հարացուցայնությունը և կցումը աճում են, իսկ մնացած բոլոր չափանիշները, այսինքն՝ հարացուցային փոփոխակայնությունն ու յուրացումը հարացուցում և շարակարգային փոփոխակայնությունն ու հարաբերակցումը այլ միավորների հետ՝ շարակարգում՝ նվազում։ Հարացուցայնության դեպքում նշանը ազատ բառադաշտից անցում է կատարում դեպի լիակատար հարացույց։

Հարացուցային փոփոխակայնությունը բնորոշվում է նրանով, որ հաղորդակցական նկատառումներից էլնելով՝ նշանը ազատ գործածությունից անցում է կատարում դեպի պարտադիր գործածություն, այլ կերպ՝ նշանի ընտրությունը սահմանափակ է կամ պարտադիր։

Յուրացումը նույնպես նվազում է քերականացման դեպքում և հակադրվում է է-րոզիային, այլ կերպ՝ անցմանը իմաստային հատկանիշների փնջից դեպի քերականական հատկանիշի կամ բազմականկությունից դեպի մենահատույթայինի:

Կցման դեպքում նշանը անկախ գործածությունից վերածվում է ածանցի կամ գուտ հնչույթային հատկանիշ կրողի: Շարակարգային փոփոխակայնության դեպքում նշանը ազատ շարադասությունից անցում է կատարում դեպի կայուն շարադասություն: Նշանը շարույթում հարաբերակցվում է այլ միավորների հետ ցանկացած ամբողջականությամբ, այնուհետև թանձրացվում է և փոփոխում է հիմքը: Վեց չափանիշներն էլ սերտորեն կապված են միմյանց հետ: Որպես կանոն՝ քերականացման դեպքում վեց չափանիշները միաժամանակ չեն կարող գործել, սակայն չկա այնպիսի դեպք, երբ չափանիշներից որևէ մեկի զարգացումը հակառակ ընթացք ունենա:

Քերականացումը սկսվում է տեքստի մակարդակի միավորներից, որոնց ընտրությունն ու համակցումը ենթարկվում են միայն գործաբանական և իմաստային խոսույթի սկզբունքներին, և որոնք վերջում հանդես են գալիս որպես բառակազմական կցյալ տարրեր՝ լիովին ենթարկվելով ձևաբանական կանոններին:

Ինչպես կարելի է նկատել, Ք. Լեհմանի քերականացման չափանիշներից մի քանիսը որոշակիորեն առնչվում են Բ. Հայնեի առաջարկած քերականացման փուլերին: Այսպես՝ կապակցման հատկանիշները՝ հարացուցայնությունն ու կցումը, մոտենում են ապակարգայնացմանն ու քայքայմանը, հարացուցային փոփոխակայնությունը և յուրացումը հակադրվում են ապահմաստավորմանը, տարածմանն ու քայքայմանը:

Այսպիսով, քերականացումն ինքնին կախված է տվյալ միավորի հաճախակի գործածությունից, որն էլ պայմանավորում է նրա առավել կայունությունը լեզվական հարացույցում, նրա կենսունակությունը, այսինքն՝ անցումը նշույթավորվածությունից դեպի ոչ նշույթավորվածություն: Ընդ որում, որևէ երևույթի քերականացումը ենթադրում է տվյալ միավորի գործածության շրջանակի նեղացում, ամրագրում այս կամ այն իմաստին, որով էլ պայմանավորվում է տվյալ միավորի իմաստային զարգացումը:

***Հայերենի անցյալ դերբայի քերականացման ուղիները ընդհանուր տիպաբանության համատեքստում:*** Հին հայերենի անցյալ և անորոշ դերբայների ցուցիչների ծագումնաբանական ընդհանրության մասին արդեն առիթ ունեցանք խոսելու: Ինչպես վերը բազմիցս նշվեց, հայերենի համապատասխան ցուցիչը բխեցվում է հնդեվրոպական \*-I և նոստրատիկ \*-I-ն ածականակերտ ածանցներից: Ըստ այսմ՝ և՛ որպես նոստրատիկ, և՛ որպես հնդեվրոպական նախաձև՝ այն վերականգնվում է ածականակերտ ածանցի տեսքով, այսինքն՝ ծագումնաբանորեն այն նախապես արտահայտել է հատկանիշի իմաստ: Սա էլ հերքում է դեռևս Ա. Մեյեից եկած այն կարծիքը, որի համաձայն և՛ անորոշ դերբայը, և՛ անցյալ դերբայը նախապես բայանուններ են եղել:

Այսպիսով՝ կանխադրվում է հայերենի վերոհիշյալ դերբայների նախնական ածականական բնույթը: Ունենալով նույն ածանցը՝ նրանք, այնուամենայնիվ, հանդես են գալիս որպես տարբեր դերբայներ: Այստեղ կարևոր են և՛ այն հիմքերը, որոնց կցվում են այս ցուցիչները, և՛ այս դերբայների կիրառության ոլորտները: Ուստի անորոշ և անցյալ դերբայների հակադրությունները հանգում են առաջին հերթին հիմքա-

յին հակադրության, քանի որ, ինչպես քանիցս նշվել է, անցյալ դերբայը կազմվում է աորիստի, այլ կերպ՝ կատարյալի, իսկ անորոշ դերբայը՝ ներկայի, այլ կերպ՝ անկատարի՝ հիմքից: Հայտնի է, որ հնդեվրոպականի ներկայի հիմքերը արտահայտել են գործողության շարունակականություն, այլ կերպ՝ անկատարություն, իսկ աորիստի հիմքերը՝ գործողությունը որպես փաստ կամ գործողության ավարտվածություն, այլ կերպ՝ կատարյալություն:

Ինչպես այլ լեզուների համապատասխան կառույցները, անցյալ դերբայով հիշյալ կառույցը քերականացվում է վերլուծական պերֆեկտի գործառնություն: Որպես կանոն՝ պերֆեկտային այդ նոր ձևը որոշակիորեն առնչվում է նաև էրգատիվ կառույցների հետ, հատկապես, երբ խոսքը վերաբերում է սեռականով էրգատիվ կառույցներին: Այն, որ էրգատիվ կառույցը կապ ունի կատարյալի հետ, վկայում է նաև այն հանգամանքը, որ հարավկովկասյան լեզուներում էրգատիվ կառույցները վերաբերում են միայն աորիստի հիմքից սերված ժամանակաձևերին<sup>10</sup>:

**Ապահմաստավորումը** տեղի է ունենում իմաստային ամբողջության կորստով, հատկապես վիճակային իմաստի անցումով պերֆեկտային իմաստի:

Ինչպես վերը նշվեց, հայերենում ժամանակի ընթացքում վերանում են սեռական ենթակայով կառույցները: Այսպես՝ միջին հայերենում արդեն բացակայում է անցողական և անանցողական բայերի հակադրությունը, ինչպես նաև սեռական ենթակայով կառույցները, թեև XIII դարի հիշատակարաններում սրանք դեռևս պահպանվել են՝ *սկիզբն արարել է նորա* «նա է սկսել»<sup>11</sup>:

**Տարածումը**, այսպիսով, տեղի է ունենում անցողական բայերի դեպքում *եմ* հանգույցի և ուղղական ենթակայի տարածմամբ արդեն միջին հայերենում, որն ուղեկցվում է սեռական ենթակայով կառույցի կորստով:

Հին հայերենին հատուկ բացարձակ դերբայական կառույցներին միջին հայերենում փոխարինում են *որ* շաղկապով և դիմավոր բայով երկրորդական նախադասությունները: Առկա չէ նաև անցյալ դերբայի դիմավոր իմաստով կիրառությունը, ինչպես գրաբարում՝ *Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ* (Խորենացի):

**Ապակարգայնացումը** բնորոշվում է նոր ժամանակաձևի զարգացմամբ, որը կազմվում է կա՛մ դերբայի և հանգույցի միջոցով, կա՛մ պարզապես դերբայի:

Ինչ վերաբերում է **էրոզիային**, ապա հայերենում այն արտահայտվում է *eal>el* հնչյունափոխությամբ: Այստեղ տեղի է ունենում ձևահնչությաբանական գործընթաց, որի դեպքում նախկին հնչյությաբանական գործընթացը վերածվում է ձևաբանական գործընթացի: *eal>el* հնչյունափոխությունը, որը տեղի է ունենում թեք հոլովաձևերում շեշտի տեղափոխության հետևանքով ձայնավորի աղմամբ, իր հերթին պայմանավորված է շեշտի՝ վերջին վանկի ձայնավորի վրա ընկնելու հանգամանքով: Ավելի ուշ այս հնչյունափոխությունը ձեռք է բերում ընդհանուր պատմական բնույթ և միջին հայերենում վերածվում վաղակատար դերբայի:

<sup>10</sup> Նման. **Stempel R.**, Die infiniten Verbalformen des Armenischen, Frankfurt am Main, Bern, New-York, 1983, էջ 78.

<sup>11</sup> **Հովսեփյան Լ. Ս.**, ԺԳ դարի հայերեն ձևազարդի հիշատակարանների լեզուն, Եր., 1997, էջ 85:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հայերենի անցյալ դերբայը անցել է քերականացման չորս փուլերն էլ:

Լեհմանի աղյուսակի տեսանկյունից այն դիտարկելիս՝ կարող ենք ասել, որ կցումը այստեղ տեսանելի չէ:

Ինչ վերաբերում է այլ միավորների հետ հարաբերակցմանը (սկոպուս), ապա այն նվազում է, քանի որ անցյալ դերբայը հարաբերակցվում է միայն օժանդակ բայի հետ:

Հարացուցայնությունը, դրան հակառակ, աճում է, քանի որ երկբայ կառույցի բաղադրիչից այն վերածվում է ամբողջական հարացույց ունեցող ժամանակաձևի բաղադրիչի: Եթե հին հայերենում այն գերակշռում է երրորդ դեմքում, ապա հետագայում տարածվում է նաև առաջին և երկրորդ դեմքերի վրա: Անշուշտ, հարացուցայնությունը մյուս կողմից էլ նվազում է, քանի որ անցյալ դերբայը դուրս է գալիս անվանական հարացույցից: Սակայն այստեղ կարևորվում է անցյալ դերբայի հարացուցայնությունը բայական համակարգում, քանի որ քերականացվում է հենց այնտեղ:

Ինչ վերաբերում է հարացուցային փոփոխակայնությանը, ապա այն, միջին հայերենից սկսած, նվազում է, քանի որ այն, ինչպես վերը նշվեց, հանդես է գալիս *եւ* օժանդակ բայի հետ և գրեթե չի գործածվում որպես որոշիչ:

Շարակարգային փոփոխակայնությունը նույնպես նվազում է, քանի որ անցյալ դերբայը հիմնականում հանդիպում է նախադաս դիրքում:

Յուրացումը ևս նվազում է, քանի որ այս դեպքում ունենք իմաստային ընդհանրացում, այլ կերպ՝ ավարտվածության իմաստը վերածվում է պերֆեկտային իմաստի, որը, այնուամենայնիվ, պահպանում է վիճակի նախկին իմաստը:

Այլ կերպ, Լեհմանի աղյուսակի համաձայն՝ նույնպես անցյալ դերբայի քերականացումը լիարժեք է կատարվել, քանի որ կապակցման չափանիշ հանդիսացող հարացուցայնությունն աճում է, իսկ փոփոխակայնության և կշռի չափանիշները՝ հարացուցային և շարակարգային փոփոխակայնությունը, յուրացումն ու հարաբերակցումը այլ միավորների հետ՝ նվազում:

Այսպիսով, հայերենի անցյալ դերբայի նախնական ավարտվածության իմաստը վերածվել է պերֆեկտային իմաստի: Նրա քերականացման ուղին կարելի է նկարագրել հետևյալ փուլերով՝

Ունեցել է ավարտվածության իմաստ և հանդես է եկել որպես որոշիչ, որից էլ բխում է նրա սեռային չեզոքությունը:

Անհանգույց գործածությունը ստորոգյալի դերում նախնական է եղել:

Անանցողական բայերի և կրավորականի դեպքում ենթական գործածվել է ուղղական հոլովով:

Անցողական բայերի ենթական սեռական հոլովով է դրվում և վերաբերում է հայցականին, որը հանդես չի գալիս որպես ուղիղ խնդիր:

Հանգույցն ավելացել է անանցողական բայերի դեպքում՝ կրկնակի նշույթավորելով նրանց վիճակի իմաստը:

Հանգույցը գործածվել է նաև անցողական բայերի հետ, որի պատճառով էլ ազատ հայցականն աստիճանաբար վերածվել է ուղիղ խնդրի պաշտոնով հանդես եկող հայցականի:



Մտեղծվել են նոր ձևեր *կամ, լինիմ/ն ունիմ* հանգույցներով: Ընդ որում, եթե *կամ*-ը և *լինիմ*-ը հիմնականում հանդես են գալիս կրավորական իմաստի արտահայտման համար, ապա *ունիմ*-ը՝ ներգործականի: Ուշագրավն այն է, որ *ունիմ*-ով անցյալ դերբայի դեպքում ենթական դրվել է ուղղական հոլովով: Ի դեպ, այս կառույցը գրաբարում այնքան էլ տարածված և կենսունակ չէ, որն էլ հուշում է նրա համեմատաբար ուշ առաջացումը:

Միջին հայերենում այն սկսում է ձեռք բերել արդեն վաղակատարի իմաստ, իսկ նոր հայերենում լիովին քերականացվում է՝ սահմանափակվելով միայն վաղակատար ներկայի և անցյալի բաղադրիչի գործառույթում:

**Անորոշ դերբայի քերականացման ուղիները ընդհանուր տիպաբանության համատեքստում:** Ինչպես հայտնի է, ինֆինիտիվը հնդեվրոպական լեզուներում ունեցել է առանձին զարգացում, և ընդհանուր նախաձև նրա համար գոյություն չունի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինֆինիտիվը տարբեր հիմքերի է կցվում, կարելի է եզրակացնել, որ նրա գործածության շրջանակն ու դրանով պայմանավորված քերականացման ուղիները տարբեր են:

Ինչ վերաբերում է հայերենին, ապա հայերենի անորոշը անցել է քերականացման միայն երեք փուլերը, քանի որ այստեղ իսկական *էրոզիա* տեղի չի ունեցել. ի նախորդի կորուստը չի կարելի էրոզիա համարել, ի տարբերություն, օրինակ, գերմանական լեզուների, որտեղ անհետանում են ինֆինիտիվի տրական հոլովի ցուցիչները:

**Անորոշի ապահմաստավորումը** բնորոշվում է ուղղության, նպատակի, ժամանակի իմաստների մասնակի կորստով:

**Տարածումը** հայերենում արտահայտվում է նրանով, որ աննախորդ անորոշը արդեն հին հայերենից սկսած արտահայտում է նպատակի իմաստ ոչ միայն շարժման բայերի հետ: Իսկ ավելի ուշ իրենց տարածումն են գտնում ինֆինիտիվի սեռական-տրականով հոլովված ձևերը՝ նպատակի և հետևանքի իմաստով:

**Ապակարգայնացումը** արտահայտվում է այնպիսի շարահյուսական կառույցների կորստով, ինչպիսիք են նախորդավոր ինֆինիտիվը, հայցականը անորոշի հետ, տրականը անորոշի հետ և այլն, ինչպես նաև անվանական հարացույցի ամբողջականության կորստով: Ինֆինիտիվը մուտք է գործում բայական համակարգ՝ կորցնելով անվանական հարացույցի ամբողջականությունը:

Իսպաներենում և պորտուգալերենում նույնպես լատիներենի ինֆինիտիվի ցուցիչ վերջին *e-ն* սղվում է՝ իսպ. *cantar* (երգել), *beber* (խմել), *vivir* (ապրել), պորտ. *alar* (խոսել), *vender* (վաճառել), *partir* (հեռանալ):

Ռուսերենի ինֆինիտիվը ժամանակի ընթացքում սերտաճում է սուպինի հետ, որի հետևանքով պահպանվում են երկու ձևն էլ՝ առանց գործառական տարբերական՝ *идти, писать*:

Եթե հայերենի անորոշի քերականացման գործընթացը փորձենք դիտարկել Ք. Լեհմանի քերականացման չափանիշների տեսանկյունից, ապա կարող ենք նշել հետևյալը՝

Անորոշի հարացուցայնությունն արդեն հին հայերենում բարձր է, քանի որ այն ունի իր առանձին անվանական հոլովումը:

Ինչ վերաբերում է հարացուցային փոփոխականությանը, ապա միջին հայերենում այն նվազում է, քանի որ աստիճանաբար սահմանափակվում է իր գործառնությունը և գործածվում է միայն գործողության անունը նշելու համար:

Ինֆինիտիվի յուրացումը նույնպես նվազում է, քանի որ այստեղ նույնպես տեղի է ունենում իմաստային ընդհանրացում՝ անցում նպատակի իմաստից գործողության ընդհանուր անվանման, լրացական նախադասության իմաստի, այլ կերպ՝ կոնկրետից վերացականի:

Հարաբերակցումը այլ միավորների հետ ևս նվազում է, քանի որ այն նախդիրների հետ այլևս չի գործածվում:

Շարակարգային փոփոխականությունը մնում է նույնը, քանի որ անորոշի դիրքը նախադասության մեջ ազատ է՝ պայմանավորված հայերենի ազատ շարադասությամբ:

Կցումը նույնպես նույնն է մնում, քանի որ անորոշը ֆիքսված բաղադրիչի չի վերածվում:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ հայերենի անորոշի քերականացումը, ըստ Լեհմանի աղյուսակի, փոքր-ինչ թույլ է, քանի որ չափանիշներից մի քանիսը մնում են նույնը: Այսպես՝ եթե շարակարգային փոփոխականությունը մնում է նույնը նվազելու փոխարեն, ապա կցումը՝ աճելու փոխարեն: Կապակցումը և փոփոխականությունը, այսպիսով, թերի են տեղի ունենում, իսկ կշիռը համապատասխանում է քերականացման չափանիշներին, քանի որ թե՛ յուրացումը և թե՛ հարաբերակցումը այլ միավորների հետ նվազում են:

Հին հայերենի անորոշ դերբայը, մեր կարծիքով, քերականացվել է հետևյալ քայլերով՝

1. *ի* նախդրի հետ միասին ցույց է տվել ուղղություն, նպատակ,

2. այնուհետև՝ ժամանակ:

3. Առանց նախդրի սկսել է արտահայտել նպատակ, վերածվել է լրացական կառույցի ստորոգյալի՝ հանդես գալով հարկադրական-պարտավորական և անհրաժեշտության գաղափար արտահայտող միադիմի, ինչպես նաև *ասես*, *համարիմ*, *կամիմ* բայերի հետ, երբեմն էլ տրամաբանական ենթական արտահայտելով հայցական կամ տրական հոլովների միջոցով:

4. Կորցնելով իր նախնական իմաստը՝ այն աստիճանաբար գործածվել է նաև գոյականաբար՝ ենթարկվելով հոլովման:

5. Աստիճանաբար նպատակի և հետևանքի իմաստի համար քերականացվում է անորոշի հոլովված ձևը:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ինֆինիտիվի քերականացումը հայերենում տեղի է ունեցել մասնակիորեն: Դրա մասին են վկայում նաև ժամանակակից հայերենի տվյալները: Ժամանակակից հայերենի անորոշի կենսունակության հարցը պարզելու համար դիմել ենք բնական լեզվաբանության օգնությանը, որին էլ անդրադարձել ենք աշխատանքի հինգերորդ գլխում:

Ատենախոսության **հինգերորդ գլուխը** նվիրված է ժամանակակից հայերենի անոթոշ դերբայի բնականությանը:

**Բնական լեզվաբանության սկզբունքները:** Բնական լեզվաբանությունն առաջ է քաշում լեզուների գործընթացների ու վիճակների շատ թե քիչ բնական լինելու վարկածը: Այստեղից էլ բխում է այն դրույթը, որ մայրենի լեզվի յուրացման, ինչպես նաև լեզվական փոփոխությունների միտումների հիմքում ընկած են բնական հարաբերությունները:

Բնական լեզվաբանությունը սկիզբ է առել Դ. Ստամպի կողմից մշակված բնական հնչյունաբանությունից: Հետագայում զարգացավ նաև բնական ձևաբանությունը, որի սկզբունքները մշակել են Վ. Մայերթալերը, Գ. Ֆլիդլը, Վ. Դրեսլերը և այլք:

Բնական լեզվաբանությունը սերտորեն կապված է նշույթավորվածության տեսության հետ: Նշույթավորվածության տեսությունը ելնում է այն դրույթից, որ լեզվի որոշ տարրեր ավելի բնական են և դրանով իսկ ավելի հեշտ են յուրացվում, ընկալվում և վերարտադրվում: Նշույթավորվածություն ասելով՝ Մայերթալերը հասկանում է հատկանիշային նշույթավորվածություն՝ Պրահայի դպրոցի մեկնաբանությամբ:

Նշույթավորվածությունը հակադարձ համեմատական է բնականությանը:

Որքան բարձր է նշույթավորվածությունը, այնքան բարդ է լեզվի այս կամ այն կողմը՝ արտասանությունը, թեքումը և այլն: Խոսողների նպատակը նշույթավորվածությունը կրճատելն է և դրանով իսկ պարզեցման (տնտեսման) օրենքին հետևելը: Լեզվական գործածությունը պետք հնարավորինս պարզ լինի:

Այդտեղ հաճախ առաջանում են նշույթավորվածության բախումներ, որի դեպքում լեզվական նշույթավորվածության կրճատումը մի ոլորտում բերում է նրա ավելացման այլ ոլորտում: Ի վերջո դա հանգեցնում է նրան, որ լեզուն օպտիմալացվում է՝ թերևս առանց հասնելու բացարձակ օպտիմալության:

Այստեղ խոսքը վերաբերում է Ա. Շլայխերի՝ լեզվի բնական օրգանիզմ լինելու տեսության զարգացմանը, որտեղ լեզուները որպես բնական օրգանիզմ, ունեն ծընունդ, ծաղկունք և մահ: Թե բնականությունը և նշույթավորվածությունը իրոք առկա են որևէ լեզվում, մնում է վիճելի, քանի որ ամբողջականությունը ավելի շուտ կարելի է վերագրել լեզվի ճանաչողական կողմին, քան թե հենց լեզվին: Խոսողներն են որոշում, թե երբ է որևէ ձևն այնքան նշույթավորված, որ ենթակա լինի փոփոխման են:

Բնական լեզվաբանության հիմքում ընկած է այն վարկածը, որ նշանակիչի և նշանակյալի միջև կապը որոշ չափով բխում է խոսողների պահանջներից: Հատկապես բնական են պարզ, արդեն երեխայի համար մատչելի երևույթները, որոնք հաճախ են հանդես գալիս տարբեր լեզուների համաժամանակյա և տարածամանակյա կտրվածքներում:

Բնական ձևաբանությունը տարբերակում է համակարգից անկախ և համակարգից կախյալ փոփոխություններ և մտադիր է բոլոր ենթահամակարգերում հաստատել այդ սկզբունքը: Բնական ձևաբանությունը պնդում է, որ իմաստային կարգերի հարաբերական նշույթավորումը կարող է սահմանվել, և այդ նշույթավորված հարաբերությունները հնչույթային ձևով ունեն նշույթային արտացոլում: Օրինակ՝ նշույ-

թավորված և ոչ նշույթավորված գույգերում, ինչպես եզակի – (հոգնակի, ներկա) – անցյալ և այլն, նշույթավորված ձևը պետք է հնչույթային ավելի մեծ ծավալ ունենա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնական լեզվաբանությունը լավագույնս է ներկայացնում ժամանակակից փուլում տվյալ լեզվական երևույթի նշույթավորվածության և գործածության հաճախականության աստիճանը, ժամանակակից հայերենի անորոշը փորձենք դիտարկել նաև դեռևս Վ. Մայերթալերի առաջարկած մեթոդով:

### ***Անորոշ դերբայի բնականությունը ժամանակակից հայերենում***

Ինչպես վերը նշվեց, լեզվական այս կամ այն երևույթի, այս դեպքում՝ ինֆինիտիվի բնականության չափանիշներից մեկը նրա գործածության հաճախականությունն է, որը նշանակում է ինֆինիտիվ կառույցների տեսակներն ու քանակը L լեզվում կամ X տարածքում: Տարբեր լեզուներում անորոշի գործածության հաճախականության աստիճանը տարբեր է:

Ժամանակակից հայերենի անորոշը, ինչպես արդեն քանիցս նշել ենք, կարող է հանդես գալ ինչպես հոլովված, այնպես էլ ուղիղ ձևով: Ընդ որում՝ անորոշը ենթակայի և խնդրի գործառույթում հիմնականում հանդես է գալիս գոյականացված՝ որոշյալ հոդով: Այլ կերպ հայերենի անորոշը նշույթավորված է, որն էլ, ինչպես վերը նշեցինք, հակադարձ համեմատական է բնականությանը:

Այսպիսով, ինֆինիտիվի բնականության աստիճանը կախված է ոչ միայն նրանից, թե ինչ ստորոգական կառույցներ են ինֆինիտիվ պահանջում, այլև նրանից, թե որքանով է հոլովված ինֆինիտիվը համարվում ինֆինիտիվ, և այսպիսով որքանով է այն ոչ նշույթավորված:

Բացի դրանից՝ բացառված չէ, որ հայերենում հոլովված ինֆինիտիվները զարգացման հետագա փուլերում ծառայեն այլ դերբայների կազմությանը և այլևս չհամարվեն ինֆինիտիվ:

Թեև մեր հետազոտությունը ընդհանուր առմամբ հիմնված է Մայերթալերի, Ֆլիդլի և Վինկլերի առաջ քաշած հատկանիշների վրա, սակայն ավելացրել ենք նաև հոլովված ինֆինիտիվի հատկանիշը՝ որպես նշույթավորված հատկանիշ:

Ինչպես ցույց տվեց քննությունը, անորոշի գործածության հաճախականությունը և դրանով պայմանավորված բնականության աստիճանը 11,5 է, որը համարվում է ցածր:

Անորոշի բնականության ցածր աստիճանը հայերենում կարող է ունենալ հետևյալ պատճառները՝

Անորոշը հոլովվում է, ինչպես, օրինակ, շարժման բայերի հետ:

Երբեմն ընդունելի է և՛ հոլովված, և՛ չհոլովված անորոշների գործածությունը, ինչպես օրինակ՝ մտադրություն ցույց տվող, անդեմ ստորոգական կառույցների դեպքում:

Ինֆինիտիվից առաջացել է մեկ այլ դերբայական ձև՝ անկատար II-ը, որը նույնպես երբեմն փոխարինում է ինֆինիտիվին, ինչպես, օրինակ՝ զգացական բայերի դեպքում:

Որոշ եղանակավորիչ իմաստ ունեցող միադիմի բայերի հետ անորոշ դերբային փոխարինում է դիմավոր բայը, երբ անհրաժեշտություն է առաջանում այն կապելու կոնկրետ դեմքի հետ, ինչպես օր՝ *պետք է զննա:*

## **Եզրակացություններ**

Ինֆինիտիվի տիպաբանական բնութագրի քննությունը հիմք է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները.

1. Ապաժամանակյա կտրվածքով ինֆինիտիվի տիպաբանական քննությունը հանգեցնում է նրա հասկացական և քերականական կարգերի համակարգային և կառուցվածքային վերլուծությանը: Ընդ որում՝ ինֆինիտիվի հասկացական և քերականական կարգերը այս երկու տեսանկյունից տարբեր ընդգրկում ունեն: Եթե համակարգային տեսակետից նրանք սահմանափակվում են ժամանակայնությամբ, սեռայնությամբ, կերպայնությամբ, ապա կառուցվածքային տեսակետից ավելանում են դիմայնությունը և եղանակայնությունը, որոնք սերտորեն կապված են իրադրական ժամանակայնության հետ որպես թաքնված կարգեր, մյուս կողմից որպես առարկայնության հասկացական կարգեր՝ ավելանում են որոշյալությունը և սեռայնությունը:

2. Ինֆինիտիվն անցել է զարգացման որոշակի ուղի, որը տարբեր լեզուներում տարբեր լինելով՝ ունի նաև ընդհանրություններ: Ինֆինիտիվը ժամանակի ընթացքում քերականացվում է և որոշակի հակադրություններ կազմում ինչպես դիմավոր բայի, այնպես էլ բայի այլ անդեմ ձևերի հետ: Ընդ որում՝ հաճախ տեղի է ունենում նաև անդեմ ձևերի փոխհաջորդում: Ինֆինիտիվը անդեմ ձևերի համակարգում հիմնականում հակադրվում է սուպինին ու գերունդին, մասամբ նաև գերունդիվին, որոնք ժամանակի ընթացում որպես կանոն վերածվում են կա՛մ անփոփոխ ինֆինիտիվի, կա՛մ գերունդային այլ քարացած ձևերի: Այլ կերպ՝ ինֆինիտիվ և այլ անդեմ ձևերի հակադրություններում թերևս ոչ նշույթավորվածը ինֆինիտիվի ուղիղ ձևն է կամ արդեն գործողության ընդհանուր բովանդակություն ունեցող քարացած այլ հոլովաձևերը, քանի որ նշված հակադրությունները չեզոքանում են հենց վերոհիշյալ ձևերի օգտին, որի հետևանքով ստեղծվում են ինֆինիտիվի և ինֆինիտիվից սերված նոր ձևերի հակադրություններ:

Ինֆինիտիվի և դիմավոր բայի հակադրությունը ի հայտ է գալիս այն դեպքում, երբ ասույթի և անորոշի ենթակաները տարբեր են: Ինչ վերաբերում է հակադրության չեզոքացմանը, ապա այստեղ կա որոշակի տարբերություն: Եթե անորոշը հայցականի, տրականի և ուղղականի հետ կառույցները, ինչպես նաև բալկանյան ինֆինիտիվը փոխարինվում են դիմավոր ձևերով, որոնք իրենց մեջ ունեն միայն բայական հատկանիշներ, ապա դիմավոր ինֆինիտիվը կամ կիսաինֆինիտիվը վերածվում է մի ձևի, որն ունի և՛ բայական, և՛ անվանական հատկանիշներ:

3. Մեր կարծիքով՝ ինֆինիտիվի տիպաբանական զարգացումը տեղի է ունենում հետևյալ կերպ.

Այն որևէ հոլովով դրված բառաձևից զարգանում է որպես ինքնուրույն շարահյուսական միավոր, տեղի է ունենում հոլովական իմաստի մթագնում, այնուհետև ներթափանցում է բայական համակարգ՝ ստանալով նաև այլ քերականական կարգեր, ինչպիսիք են ժամանակի և սեռի քերականական կարգերը, որոնցով օժտված են հին հունարենի և լատիներենի ինֆինիտիվները: Որպես հակառակ գործընթաց տեղի է ունենում կա՛մ նրա անցումը դիմավոր ձևի, ինչպես նոր հունարենում և պորտուգալերենում, կա՛մ այն գոյականացվում է և լիովին մուտք գործելով անվանական համակարգ՝ ձեռք է բերում առկայացման, երբեմն նաև սեռի քերականական կարգեր:

4. Հայերենի անորոշը նույնպես անցել է որոշակի ուղի: Թեև նրա և անցյալ դերբայի ցուցիչը նույնն է, նրանք զարգացման բոլորովին տարբեր ուղիներ են անցել: Երկու դերբայների քերականացման փուլերի քննությունը թույլ է տալիս նշել, որ անցյալ դերբայը ի տարբերություն անորոշի, անցել է քերականացման չորս փուլերն էլ, սակայն քերականացվել է ոչ թե որպես ինքնուրույն միավոր, այլ որպես պերֆեկտային ձևի բաղադրիչ: Անորոշի քերականացումը սահմանափակվել է միայն երեք փուլով: Լեհմանի աղյուսակի տեսանկյունից էլ դիտարկելիս նույնպես պարզ է դառնում, որ հայերենի անորոշի քերականացումը փոքր-ինչ թույլ է, քանի որ չափանիշներից մի քանիսը մնում են նույնը: Այսպես՝ եթե շարակարգային փոփոխակայնությունը մնում է նույնը նվազելու փոխարեն, ապա կցումը՝ աճելու փոխարեն: Կապակցումը և փոփոխակայնությունը, այսպիսով, թերի են տեղի ունենում, իսկ կշիռը համապատասխանում է քերականացման չափանիշներին, քանի որ թե՛ յուրացումը և թե՛ հարաբերակցումը այլ միավորների հետ նվազում են: Անցյալ դերբայի քերականացումը գրեթե լիարժեք է կատարվել, քանի որ կապակցման չափանիշ հանդիսացող հարացույցայնությունն աճում է, իսկ փոփոխակայնության և կշռի չափանիշները՝ հարացույցային և շարակարգային փոփոխակայնությունը, յուրացումն ու հարաբերակցումը այլ միավորների հետ՝ նվազում:

5. Հին հայերենի անորոշը որոշակիորեն կրել է նաև հունարենի ազդեցությունը, որն ակներև է դառնում Նոր Կտակարանի թարգմանության մեջ, որը, սակայն, որևէ հետք չի թողել հայերենի անորոշի պատմական զարգացման վրա: Խոսքը հատկապես վերաբերում է ասացական բայերի հետ բացարձակ կառույցներին, ինչպես նաև ՕՏԵ «մինչ», «մինչև» շաղկապին հետևող անորոշ դերբայ, *էմ* «հարկավոր է» արժեքով, ինչպես նաև *եղել*-ով և *եղել ի*-ով կառույցներին:

6. Նայած ժամանակակից հայերենում անորոշի հաճախ գործածությանը, նրա բնականության աստիճանը ցածր է, քանի որ անորոշը հոլովվում է և հանդես է գալիս հետադաս դիրքում, ինչպես օրինակ շարժման բայերի հետ: Բացի այդ՝ երբեմն ընդունելի է և՛ հոլովված, և՛ չհոլովված անորոշների գործածությունը, ինչպես օրինակ՝ մտադրություն ցույց տվող, անդեն ստորոգական կառույցների դեպքում: Մյուս կողմից՝ անորոշից առաջացել է մեկ այլ դերբայական ձև՝ անկատար II-ը, որը նույնպես երբեմն փոխարինում է ինֆինիտիվին, ինչպես, օրինակ՝ զգացական բայերի դեպքում: Անորոշի բնականության ցածր աստիճանին նպաստում է նաև այն հանգաման-

քը, որ որոշ եղանակավորիչ իմաստ ունեցող բայեր, ինչպես՝ օրինակ՝ *պետք է*, միադիմի են:

Աշխատանքի հինադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Գագինյան, Ա. Ռ., Ինֆինիտիվի տիպաբանությունը, Եր., 2015, ԵՊՀ հրատարակչություն, 240 էջ (մենագրություն):

2. Գագինյան Ա. Ռ., Հին հայերենի անցյալ դերբայի զարգացման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, Երևանի համալս. հրատարակչ., 2007, 2, էջ 125-132:

3. Գագինյան Ա. Ռ., Ինֆինիտիվի բնույթի հարցը անտիկ քերականություններում, Պրոֆետրադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2007թ. նոյեմբերի 7-9), Եր., «Մանկավարժ» հրատարակչ., 2008, էջ 362-365:

4. Gagijnjan A. R., Winkler Ch., Infinitivprominenz im Armenischen. Eine Analyse im Rahmen der Natürlichkeitstheorie, Klagenfurter, Beiträge zur Sprachwissenschaft, Bd. 33 (2007 [2009]), Wien, Praesens Verlag, 2009, 97-105.

5. Գագինյան Ա. Ռ., Անորոշ դերբայի և դիմավոր բայի հակադրության զարգացման միտումները, Բանբեր Երևանի համալսարանի, ԵՊՀ հրատարակչ., 2010, 130.2, էջ 61-71:

6. Հովսեփյան Լ.Ս., Գագինյան Ա.Ռ., Անորոշ դերբայի կիրառությունը Մատթեոսի ավետարանում հունարեն բնագրի համեմատությամբ, Ջահուկյանական ընթերցումներ, Ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ (Երևան, 2010 թ., մայիսի 6-7), Երևան, Էդիթ Պրինտ, 2010, էջ 189-200:

7. Գագինյան Ա. Ռ., Անորոշ դերբայի բնույթի խնդիրը հայ լեզվաբանության մեջ, Պրոֆետրադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2009թ. նոյեմբերի 19-21), Եր., «Մանկավարժ» հրատ., 2010, էջ 165-167:

8. Գագինյան Ա. Ռ., Ինֆինիտիվի և բայի այլ անդամ ձևերի հակադրությունների պատմական զարգացման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, «Բանասիրություն», 134. 2, Երևան, Երևանի համալս.հրատ., 2011, էջ 40-49:

9. Գագինյան Ա. Ռ., Հին հայերենի անցյալ դերբայի տիպաբանական փոփոխությունները հին ռուսերենի համարժեքների համեմատությամբ, Կանթեդ, Եր., Ասողիկ, 2011, 3, էջ 70-77:

10. Գագինյան Ա. Ռ., Հայերենի անորոշ դերբայի տիպաբանական փոփոխությունները ռուսերենի ինֆինիտիվի համեմատությամբ, Պատմաբանասիրական հանդես, 2012, 1, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ. Ը, 144-154:

11. Գագինյան Ա. Ռ., Ինֆինիտիվի տիպաբանական բնութագիրն ու զարգացումը, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ. 2012, 4, էջ 200-208:

12. Գագինյան Ա. Ռ., Հայերենի անորոշ դերբայի ցուցիչի ծագումը և գործառնությունը հնդեվրոպական և նոստրատիկ այլ լեզուների համեմատությամբ, Կանթեղ, 2012, հ. 3 /52/, Եր., Ասողիկ, էջ 54-62:

13. Գագինյան Ա. Ռ., Ինֆինիտիվի ծագման և բնույթի հարցը ռուս և եվրոպական քերականություններում, Կանթեղ, 2012թ. հ. 4 /53/, Եր., Ասողիկ, էջ 114-121:

14. Գագինյան Ա. Ռ., Ուերֆելտային ձևերի զարգացումը հայերենում և գերմաներենում, Բանբեր Երևանի համալսարանի, «Բանասիրություն», 137.2, Երևան, Երևանի համալս. հրատ., 2012, էջ 36-47:

15. Гагинян А. Р., Тенденции развития инфинитива в армянском, немецком и русском языках, Тезисы IX Международной конференции по армянскому языкознанию. Санкт-Петербург: Нестор-История, 2012, с. 45-48.

16. Գագինյան, Ա. Ռ., Ինֆինիտիվի հասկացական և քերականական կարգերի կառուցվածքային և համակարգային վերլուծություն, Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ. 2013, 3, էջ 224-236:

17. Գագինյան Ա., Անորոշ դերբայի քերականացման ուղիները ընդհանուր տիպաբանության համատեքստում, Հայագիտական հանդես, 1-2, Եր., «Մանկավարժ» հրատարակչ., 2013, էջ 11-16:

18. Գագինյան Ա., Քերականացման փուլերը և չափանիշները, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» հայագիտական միջազգային երկրորդ համաժողովի նյութերի ժողովածու (2013թ. հոկտեմբերի 17-19-ը), Եր., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ. 2015, էջ 243-246:

19. Гагинян А. Р., Типологические изменения инфинитива и перфектного причастия в среднеармянском языке в свете данных грамматикализации, Наука и образование: современные тренды, Серия: «Научно-методическая библиотека. Выпуск VIII, Коллективная монография, Изд-во ЦНС «Интерактив плюс» Чебоксары 2015, с. 30-42.

20. Гагинян А. Р., Тенденции развития инфинитива и перфектного причастия в среднеармянском языке, Социология, Журнал российской социологической ассоциации, Изд-во Российская социологическая ассоциация, 2015, 2, Москва, с. 149-153.

Гагинян Армине Ромиковна

Типология инфинитива

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук  
по специальности 10.02.02 – Общее и сравнительное языкознание.

Защита состоится 20.06.2016г. в 15:00 на заседании специализированного совета по лингвистике  
019 ВАК, при Институте языка



## Резюме

Сопоставительное изучение развития систем неопределенных форм глагола языков важна не только с точки зрения полноценного описания грамматической структуры данного языка, но и в общем и типологическом плане, поскольку формообразующие и синтаксические особенности существующих неопределенных форм в этих системах, в том числе и инфинитива, представляют типологически классифицирующую ценность, и способствуют выявлению с системной и структурной точки зрения понятийных и грамматических категорий инфинитива, его путей грамматикализации, основ нейтрализации его оппозиций с личными и безличными формами глагола, его исторических связей с другими неопределенными формами.

Диссертация состоит из введения, пяти глав, заключения и списка использованной литературы. В введении рассматриваются основные вопросы и методологические подходы исследования.

**В первой главе** рассматриваются вопросы возникновения и природы инфинитива в античных, русских, европейских грамматиках, а также в армянской лингвистике. В различных грамматических традициях инфинитив воспринимался по-разному. При этом определенную роль в этом вопросе сыграли как конкретные проявления инфинитива в данном языке, так и приоритет грамматиков в вопросе взаимоотношений плана выражения и плана содержания.

**Во второй главе** описываются структурный и системный анализ понятийных и грамматических категорий инфинитива, оппозиции инфинитива в глагольной системе и типологическое развитие инфинитива. Структурный и системный анализ понятийных и грамматических категорий инфинитива выявляет с обеих точек зрения разный объем понятийных и грамматических категорий инфинитива. Если с системной точки зрения они ограничиваются темпоральностью, залоговостью, аспектуальностью, то в плане структуры к ним прибавляются финитивность и модальность, тесно связанные с ситуативной темпоральностью. Если в качестве единицы оппозиции принять прямую форму инфинитива, то ей противопоставляются, с одной стороны, инфинитив, восходящий к дательному падежу (герундию), или предложный инфинитив, а с другой – супин и герундий, которые в дальнейшем преобразовываются, как правило, либо в несклоняемый инфинитив, либо в одну из застывших форм герундия. Нейтрализация оппозиции герундий–инфинитив происходит, когда исчезают семантические различия между герундием и инфинитивом, склоняемый инфинитив преобразуется в несклоняемую форму, т.е. исчезают его падежные значения (в немецком) и возникает новая форма для выражения значения склоняемой формы (в армянском, английском, немецком), а также в том случае, когда инфинитив субстантивируется. Нейтрализация оппозиции инфинитива и супина происходит, когда исчезают смысловые различия и различия в употреблении, и существование супина перестает быть необходимым, как, например, в русском и романских языках, а также, когда их формы совпадают и побеждает более устойчивое значение, как в русском.

Под оппозицией инфинитива и личного глагола подразумевается оппозиция, возникающая в условиях наличия финитивности в качестве отличительного признака. Известно, что основная особенность неопределенной формы глагола – ее нейтральность по отношению к грамматической категории лица, которая делает высказывание более обобщенным и абстрактным. Очень часто оппозиция инфинитива и личного глагола зависит от такого грамматического явления как латентное подлежащее. Наблюдается много ограничений, связанных с распределением как личного глагола, так и инфинитива, что, в свою очередь, обусловлено валентностью и принадлежностью к семантическому полю той предикативной конструкции, для которой инфинитив выступает в качестве обязательного или необязательного актанта. В целом, с диахронической точки зрения вследствие нейтрализации оппозиций инфинитива и личного глагола возникают балканский инфинитив и спрягаемый инфинитив. Наряду с этим происходит и преобразование в финитивные формы конструкций неопределенной формы глагола с винительным, именительным либо дательным падежом.

**В третьей главе** представляются возникновение показателей инфинитива и прошедшего причастия армянского языка и функции в общетипологическом контексте, проблема происхождения конструкции причастия в родительном падеже древнеармянского языка, возможные влияния конструкций с инфинитивом из древнегреческого.

Индоевропейский суффикс \*-l- встречается в индоевропейских и других ностратических языках как в адъективных, так и субстантивных и глагольных формах. Достаточно редко они встречаются в инфинитиве и масдаре. В ностратических языках к вышеуказанным функциям прибавляются также функции показателя многократного действия. Примечательно, что в плане объема употребления наиболее широко он используется в армянском.

Причастие древнеармянского языка, являясь производным от основы аориста, уже имеет смысл законченности, откуда и его нейтральность с точки зрения залогов. Вследствие этого функцию выражения залоговой оппозиции берут на себя падежи подлежащего. Если подлежащее с нейтральным и страдательным залогом употребляется в именительном падеже, то для выражения значения активности подлежащее в именительном падеже преобразуется в подлежащее в родительном. Наблюдая некоторые типологические общности с развитием личного глагола праиндоевропейского периода, какими являются преобразование первоначальной непереходности в переходность посредством подлежащего в родительном падеже, переход свободного винительного в винительный прямого объекта и др., приходим к заключению, что данная конструкция повторяет путь перехода из актива в номинатив, что является характерным процессом образования аналитической перфектной формы для индоевропейских языков в целом.

Инфинитив древнеармянского языка находился под определенным влиянием и греческого языка, что явно прослеживается в переводе Нового Завета. Однако в историческом развитии инфинитива оно не оставило никаких следов. Это касается прежде всего абсолютных форм с глаголами высказывания, а также инфинитивных форм, следующих за союзом «чтобы», форм с *lu* со значением «необходимо» и в конструкциях с *lɛli* и *lɛli ʃ*:

**В четвертой главе** представляются пути грамматикализации инфинитива и прошедшего причастия в обще-типологическом контексте. Б.Гейне различает 4 основных уровня грамматикализации: десемантизацию, распространение, декатегоризацию, эрозию. Армянский инфинитив прошел этапы десемантизации, распространения, частичной декатегоризации. Следов эрозии в армянском нет, но ее можно найти в немецком, английском, где исчезли показатели дательного падежа инфинитива. Упомянутые конструкции прошедшего причастия, как и соответствующие конструкции других языков, грамматикализуются в функции аналитического перфекта. В отличие от причастий других языков прошедшее причастие армянского языка прошло все четыре этапа грамматикализации. Если инфинитив образовался из значения цели и стал дополнительной структурой, то прошедшее причастие развилось из значения состояния в значении перфекта.

**Пятая глава** посвящена исследованию инфинитива в армянском языке под призмой данных натуральной лингвистики. Несмотря на частое употребление инфинитива в современном армянском языке, степень его натуральности низка, поскольку он склоняется и имеет постпозицию, например, в случае глаголов движения. Кроме того, допускается и склоняемая, и несклоняемая форма инфинитива.

**Armire Gaginyan**

### **The Typology of the Infinitive**

A thesis claiming a scientific degree of a doctor of philological sciences on the specialty 10.02.02.-  
“General and Comparative Linguistics”.

The defense will be held on 20.06.2016 at 15:00 the session of of Specialized Council on Linguistics 019 NAC at the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences of RA. Address: 15 Grigor Lusavorich, Yerevan, Armenia.

### **Summary**

The comparative study of development of verbal infinitive form systems is important not only from the standpoint of the valuable description of grammatical structure of the given language but also in the general and typological view because of the typological and classified value of *formal* and syntactical peculiarities of existing infinitive forms in these systems including the infinitive. With

relation to the system and structure it promotes the ascertainment of conceptual and grammatical categories of the infinitive, of its grammaticalization ways, basis of neutralization of its oppositions with personal and impersonal verbal forms, its historical connections with other infinitive forms.

The dissertation consists of an introduction, five chapters, a conclusion and a bibliography.

**The first chapter** of the dissertation has a focus on the problems of the origin and character of the infinitive in ancient grammars, in Russian and European grammars and in Armenian linguistics.

The infinitive was taken in different grammar traditions in different ways. And a certain role had played thereby both the concrete expressions of the infinitive in the given language and the priority of the grammarian in the matter of interrelations in content plane and expression plane.

The systemic and structural analyses of conceptual and grammatical categories of the infinitive, the tendencies of the development of the opposition between the infinitive and other impersonal forms, typological characteristics and the development of the infinitive are presented in **the 2-nd chapter** titled "The Typological Characteristics and Development of the Infinitive". The systemic and structural analysis of conceptual and grammatical categories of the infinitive shows, that from both standpoints the conceptual and grammatical categories of the infinitive have different scope. If from the systematic standpoint they confine to the temporality, genera verbi, aspectuality, then from the structural standpoint added finiteness and modality. On another hand the structural standpoint concern the categories of the gender and of the definite and the indefinite. If we take the initial form of infinitive as the edge of controversy, we can put it against the dative case derived (gerund) or preposition-infinitive patterns on the one hand and supine and gerundivum on the other hand, which in the course of time, turn into either unchangeable infinitive, or into other stable gerund forms. Otherwise, in the contradiction between infinitive and other impersonal verbal forms the unmarked form is the initial form of the infinitive or the other stable case forms of general characteristics of action, as counter forms mentioned above are neutralized precisely in favor of the forms already mentioned, which consequently set up new forms of infinitive and derived infinitive. The opposition gerund – infinitive gets neutralized as soon as the semantic differences between these forms disappear, the infinitive with case markers change into the unchangeable form of infinitive, namely, their case meanings (in German) and a new form for the meaning of the declined forms emerges (in Armenian, English, German), as well as in case the infinitive form is substantivized. As for the neutralization of infinitive-supine opposition, it also occurs when the semantic and functional differences disappear. Thus the necessity of the existence of supine disappears all by itself, as, for instance, in Russian and Romance languages and when their forms coincide and the most viable meaning survives, as it happens in Russian. The opposition between the infinitive and finite form of the verb assumes the opposition conditioned by the finite form of the verb as a distinctive feature. Quite often the opposition between infinitive and finite form of the verb depends on such grammatical phenomena as latent subject. Though an opposite tendency is also observed in the language system when infinitive is used instead of the finite form of the verb taking on its function, this does not certainly mean that the non-finite form of the verb may completely be substituted by the finite. From diachronical perspective as a consequence of the opposition neutralized between infinite and finite form of the verb in the Balkan infinitive. Paralelly the patterns of the non-finite forms of the verb in Accusative, Nominative or Dative cases grow into the finite forms. The development of these three constructions proceeds in analogical tendencies. As for the result of the development of infinitive there is certain difference. If the patterns with the non-finite form of the verb in Accusative, Dative and Nominative, as well as, the Balkan infinitive grow into the finite forms which are provided with verbal feature only, in the case of the semi-infinitive the latter grows into a form of both verbal and nom. There exist various theories on typological development of the infinitive. Summarizing all these theories, we can conclude, that typological development of the infinitive takes place in the following phases. First phase: The infinitive doesn't exist as a lexeme, but occurs as a word form in some case. Here the infinitive is used with such predicative constructions, which suppose the following noun in oblique case. In a semantic sense they express some concrete meaning /causal, allative, proposal/. Second phase. The infinitive begins to be used as an independent syntactic unit, darkening of the case meaning occurs. It is used with predicative constructions for expressing an abstract meaning, modal verbs for example. Perhaps the historical and imperative infinitive belongs to this phase, as they denote action and appear as a finite verb of the narration. Third phase: Infinitive penetrates into in the verbal system receiving grammatical categories of tense and gender that exist in Old Greek and Latin infinitive. Fourth phase: Infinitive is replaced by the finite verb, or it conjugates like finite verb. Fifth phase: The infinitive is nominalized and purchases grammatical categories of actualization sometimes also gender. The fourth and the fifth phases don't follow each other but are actually different ways of the development of the infinitive. Sometimes they appear at the same time like the finite infinitive of the Portuguese. **The third chapter** titled "The Primary Functions of the Infinitive and Past Participle and Possible Influences of Other Languages On There" presents the origin and the functions of the indicator of the infinitive and past participle in general typological context, the problem of the genesis of the construction of the participle with Genitive subject of Old Armenian, the possible influences of construction with the infinitive from Old Greek. The infinitive and past participle of Old Armenian are built with the -l suffix, which has an indo-european and even a nostratic origin. The indo-european \*-l suffix in the other indo-european and nostratic languages appears in adjective, verbal and noun constructions. It is remarkable, that the forms with \*-l within the framework of the indo-european and nostratic languages are

predominantly in the function of the adjective, then in the function of the participle, agent noun and perfect. Thus in noun constructions it mostly occurs in the diminutive participle, then in the names of instruments, abstract and other nouns. Rare enough they occur in the infinitive and masdar. The participle of Old Armenian derived from the base of Aorist has already the perfective meaning, and in the view of mood its neutralism comes from there. As a consequence the cases of the subject undertake the function of the expression of the mood opposition. Observing some typological generalities with development of personal verb of Proto-Indo-European period such as transformation of primary intransitivity into transitivity by means of the subject in Genitive, transformation of free Accusative into the Accusative of direct object etc., we conclude that the given construction repeats the way of transformation from the Active into the Nominative and that is the typical process of the formation of analytical perfective form for Indo-European languages on the whole. The infinitive of Old Armenian had a partial influence from Greek, too, that is evidently traced in the translation of the Old Testament but it has left no traces on the historical development of the infinitive of Armenian. It particularly concerns the absolute constructions with the verbs of statement, the infinitive forms following after conjunction  $\omega\sigma\tau\epsilon$  "order to", the  $\text{hul}$  form with the meaning of "necessary" and in construction with  $\text{h-}\eta\text{h}\iota$  and  $\text{h}\eta\text{h}\iota\ \text{h}$ . In the fourth chapter there are presented the grammaticalization of the Past Participle and Infinitive of Armenian in general typological context. It is known that historical language changes take place according to the classification of certain linguistic levels: At the same time, it is possible to distinguish inlevel and interlevel changes and the latter has a unique place the grammaticalization. B. Heine distinguishes four main phases of the grammaticalization: desemantisation, extension, decategorialization, erosion. The Armenian infinitive passed the phases of the desemantisation, extension, partially decategorialization. The erosion is not found in Armenian, but we can find traces of erosion in German, English, where infinitive dative indicators disappear. The mentioned construction of the Past Participle like appropriate one of other languages grammaticalizes in the function of the analytical perfect. As opposed to Participles of other languages the Past Participle of Armenian has passed four phases of grammaticalization: The thing is that having the same indicator, at the same time they apply different semantic and practical usage which brings forth differences among their grammaticalization. If the infinitive originates from the meaning of purpose and becomes an complement structure, then the past participle develops from the meaning of the state to the meaning of perfect. The fifth chapter of the dissertation has a focus on the study of the Armenian infinitive from the standpoint of the natural linguistics. In spite of often usage of the infinitive in modern Armenian the degree of its naturality is low because the infinitive declines and has a postposition as for example with verbs of motion. Moreover, the usage of the both declinable and indeclinable infinitives are sometimes acceptable.